



### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԱԿՈՒՄՆԵՐ ՄՏՅՈՒՅ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍՊԻՐՔԻՆ ՄԷՋ

Հայաստանի Ազգային ժողովը վերջին պահուն փոփոխություններ հաստատեց Ընտրական օրենսգրքին մէջ՝ նոր սահմանափակումներ պարտադրելով կուսակցություններու և դաշինքներու անունումներուն գծով: Այս քայլը տեղի կ'ունենայ խորհրդարանական ընտրություններէն երկու ամիս, իսկ թեկնածուներու պաշտօնական արձանագրութեան սկիզբէն քանի մը օր առաջ: Օրինագիծը ընդունուեցաւ 67 թեր և 6 դէմ քուէներով. բոլոր կողմ քուէարկողները իշխանութեան «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցութեան երեսփոխաններն էին:

Ըստ հաստատուած փոփոխություններուն՝ կ'արգիլուի կուսակցություններու և դաշինքներու անունումներուն մէջ անձնանուններու գործածությունը, ինչպէս նաեւ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններու յղումներն ու որեւէ վիրատրական կամ ապակողմնորոշող ձեւակերպում:

Յաւելլալ դրոյթներով կը խստացուին նաեւ քուէարկութեան ընթացակարգերը: Այսուհետեւ քուէաթերթիկները պիտի նկատուին անվաւեր, եթէ ծրարին մէջ յայտնաբերուին յաւելլալ նշումներ կամ օտար առարկաներ: Միեւնոյն ժամանակ, ընտրական պաշտօնեաներուն կ'արգիլուի քուէներու հաշուարկին ընթացքին այլ իրեր շօշափել:

Ընդդիմադիր ճակատը խիստ դժգոհութեամբ արձագանգած է այս փոփոխություններուն՝ պնդելով, որ իշխանություններու այս հապտապ քայլը ուղակիօրէն կը քիթախաւորէ նորաստեղծ «Ուժեղ Հայաստան Սամուէլ Կարապետեանի հետ» դաշինքը՝ նպատակ ունենալով ընտրություններուն ընդառաջ խոչընդոտել անոր այդ անունումով արձանագրումը:

Նշենք, որ Հայաստանի խորհրդարանական ընտրությունները նախատեսուած են 2026 Յունիս 7-ին, իսկ թեկնածուներու և ընտրական ցանկերու արձանագրման գործընթացը կը սկսի Ապրիլ 13-ին:

### ԻՐԱՆ ՅԱՅՏՆԱԾ Է ԱՄՆ-Ի ԵՒ ԻՍՐԱԵԼԻ ԿՐՈՒՄՆԵՐՈՒ ԻՏԵՒԱՔՈՎ ԶՈՒՅՐՈՒ ՄՕՏԱԿՈՐ ԹԻԸ



Հակառակորդի յարձակումներու հետեւանքով ամբողջ երկրին մէջ զոհերու թիւը անցած է 3000-ը: Այս մասին Mizan լրատւականին յայտնած է երկրի Գատական բժշկություններու կազմակերպութեան ղեկավար Ապպաս Մասճատը:

«Մարմիններու մօտ 40%-ը դժուար էր նոյնականացնել: Այդուհանդերձ, օգտագործելով կազմակերպութեան հնարարություններն ու աղբիւրները, ի վերջոյ յաջողուեցաւ ճանչնալ անոնց և մարմինները յանձնել ընտանիքներուն», - նշած է ան:

### ԿԻՊՐՈՍԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ ԿԸ ՆՇՈՒԻ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՒՅՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԸ

Հետամուտ ըլլալով արանդրութիւն դարձած սոյն գնահատելի երեւոյթին, հինգշաբթի, 2 Ապրիլ 2026-ի առաւօտեան, Կիպրոսի Խորհրդարանի լիագումար նիստի ընթացքին, Կիպրոսի համայնքի Պետական Ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան արտասանեց իր յատուկ պատգամը՝ նուիրուած 1915-ի Հայոց Ցեղասպանութեան 111-րդ տարելիցին: Նիստին ներկայ գտնուողները, խոր յարգանքով, մէկ վայրկեան յտնկայա լռութեամբ յարգեցին Եղեռնի անմեղ զոհերու յիշատակը:



Իր խօսքին մէջ ան արժեւորեց յիշողութեան, արդարութեան և պատմական ճշմարտութեան պահպանման հրամայականը՝ շեշտելով, որ Եղեռնը ոչ միայն հայ ժողովուրդի վերապրած ողբերգութիւնն է, այլև ողջ մարդկութեան խղճին ուղղուած անլռելի կանչ:

Նիստին ներկայ խորհրդակցանքները, խոր յարգանքով և լռելեայն խոնարհումով, մէկ վայրկեան յտնկայա լռութեամբ յիշեցին և ոգեկոչեցին Եղեռնի անմեղ զոհերու յիշատակը՝ վերահաստատելով, որ յիշողութիւնը կը մնայ կենդանի, իսկ արդարութեան պահանջը՝ անժամանցելի:

Սոյն պատմական արարողութեան ընթացքին, Հայաստանի Հանրապետութեան դեսպան Իննա Թորգոմեան եւս մասնակցութիւն բերած է Կիպրոսի Ներկայացուցիչներու պալատի լիագումար նիստին, որուն բացումը կատարած է Պալատի նախագահ Անիթա Տիմոթիու, որ իր յատուկ ելոյթով եւ մէկ վայրկեան լռութիւն խնդրելով, յարգած է յիշատակը՝ Օսմանեան կայսրութեան մէջ, 1915 թուականին Հայոց ցեղասպանութեան զոհերուն:

Պ.Գ.

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ ԸՆԴՈՒՄԱԶ

### ԱՐԹՈՉ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴՐ ՊԱՐՏԱԽՈՐ Է ԱՆՎԱՐԱՆ ԱՆԱՉՈՒԿ ՈՒՌԵՅՈՅ ՈՒՆԵՆԱԼՈՎ ԱՌԱՋԱՄՊԷՍ՝ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՅՆ ՀԱՇԵՐՈՒ

ՂԿՍ. ԱՐՇԱԽԻ ԿԵՕՆՏԵՍՆ՝

Պետական բարձրագոյն՝

Member of the Order of Canada Շքանշանակիր

Սոյն յօդուածով կը շեշտուի թէ Հայ Սփիւռքը, անբաժան մասնիկն է Հայ ազգին: Որպէս այդ՝ ան պարտի այսուհետեւ, նուազագոյնը՝ դիտորդներով, պաշտօնապէս ներկայ եւ մասնակից ըլլալ Հայաստանի մէջ շուտով կայանալիք համապետական ընտրություններուն:

#### Համահայկական Պատասխանատուութիւն

Յառաջիկայ Յունիսի 7-ին տեղի պիտի ունենան Հայաստանի Ազգային ժողովի հերթական ընդհանուր ընտրությունները: Արդէն իսկ Հայաստանի ներքին կեանքին մէջ, ընտրարշար մեծ թափ ստացած է:

Այս ընտրությունները, որոնք ինքնաբերաբար պիտի որոշեն Հայաստանի քաղաքական յաջորդ ղեկավարութիւնը եւ վարչապետը, ներկայ աննախադէպ ազգային եւ միջազգային խառն ու խրթին քաղաքական պայմաններուն բերմամբ բացառաբար ճակատագրական եւ որոշիչ բնոյթ ունին, որովհետեւ անոնց արդիւնքէն կախեալ է ոչ միայն Հայաստանին՝ այլեւ նաեւ հիմնականին մէջ յաջորդող բազմաթիւ տարիներուն ընթացքին մեր ամբողջ ազգին, մօտ ապագային ունենալիք նկարագիրը եւ անոր երկար տարիներու ճակատագիրը, տառացիօրէն գոյութեան կանխատեսումը:

Այս բոլորը նկատի առնելով է, որ այսօր Հայ ժողովուրդը ամբողջութեամբ, այսինքն՝ բնականաբար առաջին հերթին Հայաստանի քաղաքացիները, եւ սակայն ոչ միայն իրենք, այլ նաեւ անժխտելիօրէն Հայ ժողովուրդի կառոյցը ամբողջացնող հսկայական Սփիւռքը, պարտաւոր են իրենք զիրենք նկատել մեծ պատասխանատուութեան մը առջեւ, իրենց ունեցած ամբողջ կարողութիւններով ազդելու այս ընտրութեանց արդիւնքին վրայ, իրենց տրամադրելի բոլոր ճանապարհներով, ուղեցոյց ունենալով առանձնապէս՝ ազգային գերագոյն շահերը:

#### Հայ Մամուլի Դերը

Ընտրություններուն ընդառաջ, կ'ակնկալուի թէ Հայ մամուլը պիտի այլեւս ամէն օր աւելի կեղդոնացած՝ վերլուծումներով եւ լուսաբանություններով, գիտակից Հայ հասարակութեան ուշադրութիւնը ուղղէ ընտրություններուն բերմամբ արժարժուող հրատապ հարցերուն վրայ:

Արդէն իսկ շատ երկար է լուրջ հիմնահարցերուն շարքը, այս առիթով ձեռնառած քաղաքական տարբեր խմբաւորումներու կողմէ արժարժուած՝ ներքին ճակատին այսինքն՝ Հայաստանի մէջ: Սակայն այս անգամ այդ բոլորին մասին չէ այս յօդուածը, այլ ստեղծուած ընդհանուր «աղմուկին» մէջ բոլորովին մոռցուած հսկայական Հայ Սփիւռքին գոյութիւնը յիշեցնելու եւ անոր բացակայութիւնը սրբագրելու հիմնահարցն է մեր նպատակը:

#### Հայաստան-Սփիւռք Փոխշաղկապութեան Յոյժ Կարեւորութիւնը

Հիմնահարցերու շարքին մէջ խիստ կարեւոր տեղ կը գրաւէ Հայ Սփիւռք եւ Հայաստան իրարու նկատմամբ ունեցած փոխադարձ պարտականութեանց եւ նոյնպէս ալ իրաւունքներու հիմնական հարցը, որ կարելի է ըսել թէ Հայոց Ցեղասպանութենէն ի վեր, անցած 111 տարիներու ընթացքին, բացի ժամանակաւոր կարգ մը ցանցառ նախաձեռնություններէն, դժբախտաբար ոչ մէկ ժամանակ առարկան դարձած է համազգային առումով հանգամանատր, եւ հիմնական բնարկման, վերլուծման եւ վերջնականապէս գործադրելի եզրայանգման:

Այս օրերուն, աւելի եւս մտահոգիչ է մանաւանդ Հայաստանի ներկայ իշխանութեանց Սփիւռքի նկատմամբ որդեգրած՝ ոչ միայն բացայայտ գաղջ, այլ՝ ուղղակի արհամարհական կեցուածքը: Ահա թէ ինչու այս տողերուն հեղինակը, այս յօդուածով, յստակօրէն որպէս ազգային լուրջ քննարկման արժանի նիւթ՝ Հայաստանի ընտրություններուն ընդառաջ, շեշտակի կերպով կ'արժարժէ Սփիւռք-Հայաստան փոխադարձ պարտականութեանց եւ իրաւունքներու սահմանման անխուսափելի հիմնահարցը:

#### Հայաստանի Իշխանություններու Ձեւաւորման Ի Խնդիր Սփիւռքի Վերաբերող Դերը

Որոշ է, թէ այս յօդուածով սկսած եւ ակնկալելի անոր հետեւելիք այլ արտայայտություններով, այս հարցին բազմակողմանի քննարկման, եւ անկէ բխած համազգային տարողութեամբ գործադրելի տրամաբանական եզրակացությունները պիտի մանաւանդ ճշդեն նաեւ, այսուհետեւ Հայաստանի մէջ կայանալիք ընտրություններուն մէջ եւ անոնց նկատմամբ Սփիւռքին վերաբերող դերը եւ անվիճելի բաժինը, անկախաբար եկող գացող իշխանություններէն եւ օրուան վարչապետներուն կամ ղեկավարներուն քմահաճոյքէն կամ բարի կամեցողութենէն:

(Շար.ը տեսնել էջ 3)

# ԽԱՊԱՊՈՒԹԻՒՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ Է

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍԵԱՆ  
ՊԳՂ, փրոֆեսոր

Համայն հայրենիքը սօսում է տաղաար սօսներից Չատիկը: Շատ է գրում այդ մասին, ես էլ փորձեմ արժեքներ այն: Չատիկը պարզապես սօսն չէ: Այն օրացույցի հերթական նշում չէ, ոչ էլ միայն ուրախության ու շնորհատրամբանքների առիթ: Չատիկը լուր ծնունդ ճշմարտություն է՝ մարդու հոգու խորքում, ներքին վերածնունդ, որը չի երեսում, բայց խորությամբ զգացում է եւ փոխում է մարդու մտքից էությունը: Երբ մարդը գնում է եկեղեցի եւ լոյս է բերում, դա պարզապես մոմի կրակն է: Դա յիշեցում է, որ խառնուրդ երբեք վերջնական չէ: Այդ լոյսը խորհրդանշում է Քրիստոսի Յարութիւնը՝ այն յաղթանակը, որը եղաւ մահուան, ցաւի, յուսահատութեան վրայ: Բայց եթէ այդ լոյսը մնում է միայն ձեռքերում եւ չի հասնում սրտին, այն դառնում է սովորական կրակ՝ առանց հոգու ջերմութեան: Ընդգծեմ նաեւ, որ Չատիկի խորհուրդը սեղանների ճոխութեան մէջ չէ: Այն չի չափում ներկուած ձուերի քանակով, ոչ էլ այն նկարներով, որոնք մենք շտապում ենք ցոյց տալ աշխարհին: Ծոխ սեղանը կարող է լցնել տունը, բայց չի կարող լցնել հոգին: Իսկ հաւատը, երբ դառնում է ցուցադրութիւն, կորցնում է իր ամենաթանկ էությունը՝ անկեղծութիւնը: Շատերը գիտեն «Չատիկ» բառը, բայց չեն զգացել նրա խորքը: Չեն հասկացել, որ դա մահից կեանքի անցումն է, հին մարդու մարում ու նորի ծնունդ: Չատիկը քեզ հարց է տալիս՝ դու ի՞նչ ես յաղթահարել քո ներսում, ի՞նչ ես ներել, ի՞նչ ես վերակենդանացրել քո հոգում: Եւ գուցէ ամենակարեւորն այն է, որ հաւատը չի սիրում ցուցադրութիւն: Այն չի ապրում «ցոյց տալու» մէջ: Այն ապրում է այն պահին, երբ դու մոռնում ես վառում ոչ թէ ուրիշների աչքի համար, այլ քո ներսի խառնուրդն: Երբ դու լոյս ես տանում տուն՝ ոչ թէ որպէս աւանդոյթ, այլ որպէս որոշում՝ ապրել աւելի մաքուր, աւելի սիրով, աւելի ճշմարիտ: Չատիկը հրաշալի է հենց այն ժամանակ, երբ այն ապրում ես, ոչ թէ ցուցադրում: Երբ լոյսը դառնում է ներսի մի մասը, ոչ թէ պարզապէս մի վայրկեան լուսանկար:

Չատիկի սօսն առիթով յիշեցի, որ մեծն Օմար Խայամն ասում էր. երբեք ոչ ոքի մի՛ պատմիր քո ցաւերի ու ցաւոտ տեղերի մասին: Իմացի՛ր, որ մի օր հաստատ խփելու են հենց ցաւոտ տեղիդ: Ասում էր, բայց մեզանում այդպէս էլ լսող չեղաւ: Յատկապէս նախընտրական զգվտողում բոլորն էլ մոռանում են դա ու ի ցոյց են դնում մեր թոյլ ու խոցելի կողմերը: Դէ թշնամիներն էլ օգտուում են դրանից: Դիշո՞ւ է, երբեմն մարդկանց մի մասը կանգ է առնում, քանի որ վախենում է սխալ թոյլ տալուց եւ պարտուելուց: Իսկ ես ունեմ այլ նպատակ՝ բաց չթողնել հնարատրութիւնը, քանի որ ինչպէս Չիգոմուդ Ֆրեյդը էր յուշում. սխալը կարելի է ուղղել, բայց բաց թողնուած հնարատրութիւնը երբեք չես կարող վերադարձնել:

Բնութեան մէջ կենդանիների միայն երեք տեսակ կայ, որ իրար դէմ գնում են պատերազմի՝ մարդիկ, ագռաւները ու մրջյունները: Տարբերութիւնն այն է, որ վերջին երկուսի դէպքում բոլորը միասնաբար պայքարում են միմեծ արեան վերջին կաթիլը, իսկ մարդկանց դէպքում բոլորովին այլ պատկեր է. նրանք կարող են կռուի կէսից լքել մարտադաշտը, քաքրուել, իսկ երբեմն էլ ուղղակի դաւաճանել իրար: Դէ արի ու հաւատայ, որ ամենախելացի էակները մարդիկ են: Բոլոր դէպքերում ապացուցուած իրողութիւն է, որ ատելութեան հիմքի վրայ մղուած պայքարի ընթացքում կառուցուած բոլոր ռազմավարութիւնները տապալուել են՝ փլատակների տակ թողնելով դրանց ճարտարապետներին: Բայց ցաւն այն է, որ այդ ամէնը գիտակցում է միայն այն ժամանակ, երբ մարդը սեփական մաշկի վրայ է զգում պարտութեան ցաւն ու ծանրութիւնը: Իսկ մինչ այդ հերոս է եւ այնքան տարուած ինքնախաբէութեամբ, որ ապրում է համոզմունքով, թէ որքան թունդ լինի ատելութեան չափաբաժինը, նոյնքան հեշտ կը լինի սպասուելիք յաղթանակը: Սակայն պարզից էլ պարզ է, որ երբ խօսքի ու մտքի տակ գաղափար ու հայեացքների համակարգ, երեւոյթների ըմբռնման սկզբունքների ամբողջութիւն չկայ եւ միայն լեզուն է շաղակարգւում, այդ լեզուն մի օր անպայման կը կտրուի հիմքից՝ ասելիքի բացակայութեան պատճառով: Բայց դա արդէն այլ անուն ունի՝ ինքնաչնչացում: Կարճ ասած՝ մարդիկ դաժանացել են: Շատ են իրենք իրենցով զբաղուում: Ոչ ոք կողքին չի տեսնում: Չգիտեն՝ ի՞նչ է եղել, գոռոզացել ենք, վա՛խ կայ սրտներում: Իսկ ես աշխարհից մի բան եմ ուզում, որ մարդիկ իրար նկատմամբ լինեն աւելի բարեհամբոյր, աւելի մարդկային, բարի: Որովհետեւ առանց բարութեան ու բարոյականութեան հնարատր չէ մարդ մնալ, ունենալ մարդկայնութիւն: Դա հոգեւոր, ոգեղեն որակ է, առանց որի մարդը չի կարող ապրել հասարակութեան մէջ: Բանգի «Բարոյականութիւնը բացարձակ է, ինչպէս բացարձակ են բարիքն ու չարքը, օրինակաւն ու մեղսայիցը (զուտ մարդկային, հումանիտար հասկացութեամբ, այլ ոչ թէ քաղաքական)»,- յաճախ շեշտում էր Կարէն Դէմիրճեանը:


Ի հարկէ, կեանքը միշտ չէ, որ կատարեալ է լինում: Բայց ինչ-որ պահից սկսում ես հասկանալ, որ կատարեալ լինելու կարիք էլ չկայ: Կարելի է ուղղակի ապրել՝ աւելի թեթեւ, աւելի հանգիստ, աւելի քո ձեռով ու քեզ սնան: Սովորում ես չբարդացնել ամէն ինչ, «չկախուել» ամէն խնդրից, չկորցնել քեզ այն բաների մէջ, որոնք իրականում այդքան էլ կարեւոր չեն: Ու ամենահետաքրքրիչը՝ երբ սկսում ես աւելի թեթեւ վերաբերիլ, կեանքն էլ քեզ հետ աւելի թեթեւ է դառնում: Չեմ քաքցնի, ես դեռ սովորում եմ: Բայց արդէն ուրիշ զգացողութեամբ: Աւելի հանգիստ ներսում, աւելի վստահ իմ մէջ:

Աւելին: Ուզում եմ ասել գրողի ծոցը ուղղարկէք երկրորդ հնարատրութիւնը: Թող այն այրուի այնտեղ, որտեղ արդէն մէկ անգամ մոխիր է դարձել վատաւորութիւնը: Թող կորչի այն ճանապարհին, որտեղ դու կանգնել ես՝ սրտիդ մէջ հարկիր կտորով, բայց դեռ հաւատացել ես, թէ այս անգամ այլ կը լինի: Չի լինելու: Որովհետեւ նոյն իրավիճակն է, նոյն սառնութիւնն ու անտարբերութիւնը, նոյն անփոքր հայեացքները, որոնք մի անգամ արդէն չնչնացրել են, քթել հոգուդ մէջ: Մարդիկ չեն փոխում, երբ իրենց դա պէտք է: Նրանք փոխում են բառերը, դիմակները, ձեւացնում են զոյւն, բայց ներսում մնում են նոյնը: Եւ դու, եթէ երկրորդ անգամ նոյն դուրը բացես, դու արդէն պատահական զոհ չես լինելու... դու ընտրած ցաւ ես լինելու: Ուզում եմ ճշալ՝ հերիք է հաւատալ սին խօսքերին, որոնք գործով երբեք չեն ապացուցուել: Հերիք է սպասել այն երազին, որն արդէն մէկ անգամ ամէն ինչ թողել է կիսատ: Գիտակցել է պէտք, որ իրական, մարդկային սէրը երբեք չի գալիս կտորելու համար, քանզի ով քեզ կտորել է՝ չի եկել սիրելու: Հետեւապէս, ուղարկիր երկրորդ հնարատրութիւնը գրողի ծոցը, առանց ավստանքի, առանց հետ նայելու: Թող գնալ այնտեղ, որտեղ տեղն է՝ մոռացութեան, փակուած էջերի մէջ: Որովհետեւ կայ մի պահ, երբ ստին ու ստախօսին ներելն այլեւս մեծութեան նշան չէ, այլ թուլութեան: Այս դէպքում է, որ ընդամենը կայ մի ճշմարտութիւն,

որ պէտք է հնչի բարձր, յստակ, անշրջելի՝ հայրենիքն ու մարդ-մահկանացուն արժանի են մի սիրոյ, որը երկրորդ փորձ չի պահանջում:

Միայն թէ յաճախ է լինում, երբ յանուն աքոռի ու համանման մանրութների, ուղղակի մարդուց գողանում են ամենաթանկը, նուիրականն ու անփոխարինելին: Իսկ գողը լինում է երկու տեսակ. ա) Սովորական գող, ով քեզանից գողանում է փող, պայուսակ, ոսկի, ժամացոյց, հեռախօս եւ այլն: բ) Քաղաքական գող, ով քեզանից գողանում է քո ապագան, երազանքը, աշխատանքը, աշխատավարձը, կրթութիւնը, առողջութիւնը, ուժը, քո ժպիտը...

Միայն թէ զարմանալի է դրանցում եղած տարբերութիւնը՝ սովորական գողն ընտրում է քեզ, իսկ քաղաքական գողին ընտրում ես դու: Սակայն աւելի զարմանալի տարբերութիւն է այն, որ սովորական գողին փնտռում է ոստիկանութիւնը, իսկ այդ նոյն ոստիկանութիւնը ապահովում է քաղաքական գողի անվտանգութիւնը: Իսկապէս՝ «Դէ եկ վարդապետ ու մի խենթանայ...»:



Չգիտեմ ծերաբնում եմ, թէ նախընտրական լարուած մթնոլորտն է ազդում. Շատ բաների սկսել եմ այլ կերպ վերաբերուել: Օրինակ՝ ես շատ եմ սիրում Հրանտ Մաքետեսեանին ու նրա արձակը: Անկասկած, նա մեր անգերազանցելի գիւղագիրն է: Բայց վերջերս նկատել եմ, որ այլեւս ես համաձայն չեմ մեծ գրողի այն մտքի հետ թէ. «Մարդ ու անասուն իրարից ջոկուում են սուկ յիշողութեամբ»: Շունն ու կատուն, հողն ու ջուրն էլ յիշողութիւն ունեն. Ծառի մարմնին մի ցաւ տուր, եկող տարի գնայ տես այդ ցաւի յիշողութիւնը: Իրականում մարդու եւ անասունի արանքում մի բաժանարար գիծ կայ ընդամենը՝ մարդը գիտի մահուան անխուսափելիութեան մասին: Եւ անասունում է, երբ մոռանում է կեանքի անցողիկութեան մասին: Թող նախորդ ու ներկայ իշխանութիւնները թաղումների շատ գնան, սա կ'օգնի, որ նրանք մտածեն իրենց կեանքի վերջատրութեան մասին. Թող նրանց ամենագոր մահուան պատկերը մի պահ անգոր դարձնի, մահուան մասին խոհն է տանում կեանքի իմաստի փնտռութիւն, յետոյ այդ մահուան միջով է գալիս յարութիւնը:

Մէկ-մէկ էլ մտածում եմ. թէ ինչու մեղիան երբեք չի խօսում մահուան մասին: Հաւանաբար նրա գլխաւոր խնդիրը կեանքի իմաստի փնտռութիւնն է, ապաշխարանքի ու ներման կիրակի գտնելը: Տարիների ընթացքում եկել եմ այն համոզման, որ բառերը հիմնականում ատելորդ են: Մարդու փոխարէն պէտք է խօսի նրա կեանքը: Իրական կեանքը: Իսկ մեզ մօտ հասարակութեանը հաճոյանալու մրցավազք է սկսուել, դարակազմիկ խոստումներ են տալիս, մոռանալով, որ քսիւմ է՝ առանց դպրոց գիւղ չկայ, բայց իրար հետեւից դպրոցներ են փակուում, մի տեսակ խտացման գործընթաց է սկսուել այդ ոլորտում՝ մի քանի գիւղի համար մի դպրոց են կառուցում: Յայտնի ճշմարտութիւն է՝ ազգերը, որոնք ծաղրում են իրենց երազանքը, ապագայ չեն ունենում. նրանք անգամ ներկայ չեն ունենում: Իսկ երազներն ու մտաւոր թռիչքները հենց դպրոցներում են ծնում եւ ոչ մէկ այլ վայրում:

Մի կարեւոր բաղադրիչ էլ է շատ շահարկուն նախընտրական գործընթացում: Խաղաղութեան զգայուն ու մեր տառապեալ ժողովրդի համար շատ ցանկալի ու նուիրական բաղադրիչն է: Դէ եկէք մի պահ կանգ առնեք ու հասկանանք՝ ինչ է իրականում խաղաղութիւնը: Ընդգծեմք, որ խաղաղութիւնը պարզապէս կրակոցների բացակայութիւնն չէ. դա մեր երեխաների անվտանգութիւնն է, մեր ընտանիքների հանգիստը, մեր երկրի ապագան: Յետոյ էլ պէտք է հաշուի առնենք, որ այս խաղաղութիւնը մեզ հեշտ չի տրուել: Այն ձեռք է բերուել ցաւով, կորուստներով ու ծանր որոշումներով: Բայց այսօր կան ուժեր, որոնք փորձում են մարդկանց վախերի ու զայրոյթի վրայ խաղալ՝ իշխանութեան հասնելու համար: Նրանք խոստանում են հեշտ լուծումներ, բայց իրականում մեզ տանում են նոր լարուածութեան ու անորոշութեան, որից պէտք է շատ զգոյշ լինել: Յետոյ էլ պէտք է հասկանանք՝ երբ քեզ դրոյում են ատելութեան, երբ քեզ համոզում են, որ ամէն ինչ պէտք է սկսել գրոյից, յաճախ դրա հետեւում ոչ թէ պետութեան շահն է, այլ իշխանութեան հասնելու ցանկութիւնը: Ըմբռնեմք, որ խաղաղութիւնը պահելը դժուար է, իսկ կորցնելը՝ շատ հեշտ: Ուստի եկէք մտածեմք սառնասրտօրէն ու ընտրենք այն ճանապարհը, որը կը պահպանի մեր երկրի կայունութիւնն ու ապագան: Վերջապէս, խաղաղութիւնն ընտրութիւնն է: Իսկ թէ՛ անհատապէս, թէ՛ միասնաբար, այդ ընտրութիւն կատարողը մենք ենք, մեզանից իւրաքանչիւրը:

4.04.2026, Երեւան

<b>Խմբագրութեան համակարգող՝</b>	<b>Գոկոտ Արշակիր Կեօնճեան (Մոնթթեալ)</b>
<b>Գործադիր խմբագիր՝</b>	<b>Յակոբ Վարդիվառեան (Սիւ Ժըրզի)</b>
<b>Խմբագրական Կազմ</b>	
<b>Յակոբ Անտիբեան</b>	(Երեւան)
<b>Պայծիկ Գալայճեան</b>	(Պէյրուօ)
<b>Չաւեն Գրիգորեան</b>	(Լթեւթ)
<b>Վաչէ Սեմերճեան</b>	(Լոս Անճելըս)
<b>Ֆաւցէ</b>	
<b>Baikar Association Inc.</b>	
<b>755 Mt. Auburn Street</b>	
<b>Watertown, MA 02472 U.S.A.</b>	
<b>Website: www.baikarweekly.com E-mail: baikarweekly@gmail.com</b>	
<b>Tel: 1-201-406-9771 Fax: 1-201-661-8722</b>	

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆԴՀԱՆՈՒՄ ԵՎ ԿԵՆՏՐՈՆ

(Շարունակում Ա. Էջեն)

Որոշ է նաև թե այս հիմնական հարցին քննարկման ընթացքին, ի բացակայությունը պետական և համազգային ճանաչում վայելող վերահսկիչ կառույցի մը, կարծիքներու ազատ արտայայտման սկզբունքի գործադրությունն է, որ պիտի առաջնորդէ այլազան և վստահաբար նաև յաճախ գիրար հակասող կարծիքներու արտայայտումը: Ինչ կը վերաբերի այս տողերուն հեղինակին, համաձայն իր արդեն իսկ հետետղականութեամբ հաստատուած սովորութեան, ան կը հաստատէ թէ իր քննարկումը կարելիութեանց առաւելագոյն չափով հիմնուած է պատմական և գործնական անվիճելի տուեալներու ծիրին մէջ՝ առանձնապէս տրամաբանական և դժուար վիճելի պատճառաբանութեանց վրայ:

**«Կարեւորագոյն տուեալը որ հիմը կը հանդիսանայ մեր մնացեալ բոլոր պատճառաբանումը հետետղականութեան, այն է՝ թէ Հայ Սփիւռքը անբաժանելի մասնիկն է Հայ ազգին»**

### Հայկական Սփիւռքի Առանձնայատկութիւնը

Ծանօթ իրականութիւն է, թէ բազմաթիւ այլ ազգեր եւս ունին, իրենց ազատ կամքով մայր հողը թողած, երկրագունդի տարբեր վայրերու մէջ հաստատուած մասնիկներ: Հետեւաբար բոլոր այդ ազգերը, իրենք եւս ունին փոքր կամ երբեմն ալ աւելի բազմամարդ սփիւռքներ: Սակայն այսպիսիները չեն կրնար, եւ ոչ ալ յաւակնութիւնը ունին, իրենք իրենց հօրենական ազգութեան մաս նկատել: Անոնք առաւելագոյնը, կ'արտայայտուին ըսելով, թէ իրենք պարզապէս ծագումով կը պատկանին որոշ ազգութեան մը:

Հիմնովին տարբեր է, միլիոններ հաշուող Հայկական սփիւռքի խոշոր մասան կազմողներու պարագան, որուն թիւը, առաջին հերթին, բազմաթիւ անգամներով կը գերազանցէ նոյնինքն մայր Հայաստանի սահմաններէն ներս ապրող կայրութեան թիւը, եւ որ նաեւ կոպտօրէն է համամարդկային ռճրագործութեան մը հետեւանքով է միայն, որ մէկ օրէն միւսը, թողելով իր հօրենական տունը, գործը, դպրոցները, կառույցները, տեղահանուած է միայն ստոյգ մահէն ազատելու համար, եւ սկիզբը միայն արժամաբար, բնակութիւն հաստատած է աշխարհի տարբեր երկիրներու մէջ: Միլիոններու հասնող Հայերու այս համախորհրդումը, որ այդ ողբերգական հանգրուանին եւ այնուհետեւ կրեց Հայ Սփիւռքը որակումը: Կասկածէ վեր է, թէ առաջին իսկ օրերէն, այդ հանգրուանին՝ անվիճելիօրէն անբաժանելի և հարազատ մէկ խոշոր մասն էր Հայ ազգին:

### Յետ-Յեղասպանութեան Սփիւռքի Անցած Ուղին

Մեր միտքերու տրամաբանական զարգացումը կատարելու համար հիմնաքալ առ քալլ հետեւինք Սփիւռք կոչուած այդ հաւաքականութեան, Հայոց Յեղասպանութենէն ետք մինչեւ այսօրուան մեր օրերը, 111 տարիներու ընթացքին, անցած յաջորդական հանգրուաններուն:

Վերացական ըլլալով հանդերձ, եթէ վայրկեան մը որպէս պարզ մտամարզանք, շարունակենք մեր տրամաբանութեան շղթան եւ ենթադրենք թէ այդ Յեղասպանութեան դժոխային օրերուն գոյութիւն ունենար իր անունը արդարացնող Հայկական պետականութիւն մը, պատասխանատուութեան գիտակցութիւն ունեցող անոր օրուան իշխանութիւնները եւ ղեկավարները անպայմանօրէն, իրենց առաջնահերթ եւ անմիջական պատասխանատուութիւնը պիտի նկատէին ձեռնարկել ազգահաւաքի, եւ ազգապահպանման տարբեր արտակարգ օժանդակութեան հսկայական աշխատանքի մը, ջանալով կարելի առաւելագոյն չափով արդարացնել, անվիճելիօրէն իրենց պարտականութիւնը հանդիսացող պաշտպանութիւնը եւ հոգատարութիւնը Հայ ազգին հարազատ եւ անբաժանելի այդ մէկ խոշոր հատուածին:

Գիտենք սակայն, թէ այդ օրերուն չկար ո՛չ այդպիսի պետականութիւն եւ ո՛չ ալ համապատասխան իշխանութիւններ:

Ամբողջական ոչնչացումէ ինք եւս մագապուրծ ազատած, այդ օրերու Խորհրդային Հայաստանը դժուարագոյն պայմաններու մէջ՝ եւ աւելին, համաշխարհային երկրորդ պատերազմի դժնդակ տարիները եւս ապրելով, երեք տասնամեակներէ ետք, հազիւ թէ կարողացաւ, բոլորովին անկատար, տանջալից առաջին քանի մը քայլերը առնել, տեսականօրէն իր պատասխանատուութիւնը հանդիսացող Սփիւռքի իր գաւակները հաւաքելու համար՝ ներգաղթի մեծ մասամբ անյաջող ծրագիրը գործադրելով:

Մեր մտաւորաբար չէ, եւ այս մէկ յօդուածով բնականաբար կարելի ալ չէ աւելի ընդլայնել Հայաստանի հանրապետութեան յաջորդական իշխանութեանց՝ այդ օրերէն ետք եւս, մինչեւ նոյնիսկ մեր օրերը այսօր, Հայ Սփիւռքին ազգային հոգածութիւն տալու աշխատանքին գործնապէս աննշան, գրեթէ ոչինչի հասնող, տարրորդական լուրջ վերլուծումը կատարել: Ապահով կերպով սակայն կարելի է այդ աշխատանքին տարրորդութիւնը ընդհանուր առմամբ, դժբախտաբար որակել ճիշդ այս երկու բառերով, այսինքն գրեթէ ոչինչ:

Կանխելու համար կատարուած այս ծանրակշիռ հաստատման առնչութեամբ, մակերեսային շուտիկութեամբ ակնկալելի որեւէ քննադատութիւն, պէտք է աւելցնենք թէ այս տողերուն հեղինակը ուղղակի անձնական եւ շատ երկար փորձառութեամբ, շատ մօտէն ծանօթ է, թէ 1946-ի ներգաղթի շարժման, թէ աւելի վերջ 1960-ական տարիներուն անոր փոքր չափով շարունակման բոլոր մանրամասնութեանց. նոյնպէս շատ մօտէն ծանօթ է այդ տարիներուն եւ աւելի ետք Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէին գնահատելի որոշակի ջանքերուն, ինչպէս նաեւ սփիւռքահայ ուսուցիչներու եւ պատանիներու յատուկ տարբեր ամառնային ծրագիրներու գործադրութեան մանրամասնութեանց: Նոյնպէս ան մօտէն ծանօթ է աւելի վերջ, Սփիւռքի նկատմամբ գուցէ ամենալուրջը նկատուելու արժանի, վերանկայիացած Հայաստանի տարիներուն մէկ կարճ շրջանին ընթացքին ստեղծուած Սփիւռքի Նախարարութեան գնահատելի աշխատանքներուն տարրորդութեան, եւ վերջապէս նաեւ ներկայ իշխանութեանց կողմէ, Սփիւռքի Նախարարութեան բաւանակնին յաջող ձեռնարկը դժբախտաբար դադարեցնելով, փոխարէնը այսպէս կոչուած Սփիւռքի յանձնակատարի մը ստեղծման բոլորովին անպտուղ եւ անիմաստ լրջօրէն քննադատելի բոլոր պարագաները:

### Անբաւարար Պետական Հոգածութիւն

Ներկայ այս յօդուածին կեղծոնական նպատակն է, գուցէ առաջին անգամ ըլլալով, բացայայտ եւ բարձրաձայն յայտարարել թէ դժբախտաբար յստակ, որոշ եւ անվիճելի է թէ Հայաստանի հանրապետութեան կողմէ նախաձեռնուած վերոյիշեալ աշխատանքներուն բոլորին ընդհանուր գումարը համարեայ ոչինչ չափով իսկ չէր կրնար բաւարարել, աշխարհաժառանգ Հայ Սփիւռքին անհրաժեշտ՝ նոյնքան հսկայածաւալ պահանջները, որ անժխտելիօրէն իրենց պարտականութիւնն էր անցնող 111 տարիներուն ընթացքին, որպէսզի մեծ կարողակալութիւն եւ տարողութիւն ունեցող այդ հսկայական հաւաքականութիւնը նուազագոյն չափով իսկ պահէր եւ մինչեւ այսօր ունենար իր ներկայի թէեւ ոչ կատարեալ, սակայն պատկառելի ազգային նկարագիրը:

Այսօր կարեւորութեամբ կը մատնանշենք եւ բարձրաձայն կը յայտարարենք, թէ փոխարէնը, այդ բոլորը սքանչելի կերպով կատարուեցաւ այդ նոյնինքն անպաշտպան մնացած եւ Հայ Սփիւռքը անունը կրող հաւաքականութեան կողմէ, առանձնապէս անհատական գոհաբերութիւններով, ու յաճախ բոլորովին կամուտը՝ այլապէս միլիոններ արժողութեամբ աշխատանքով:

Առարկայական անվիճելի հետեւանքը այս իրականութեան այն է, թէ անցեալի եւ թէ ներկայի եւ նաեւ նախատեսելի մօտ ապագայի Հայկական պետութիւնը, եւ գայն ներկայացնող բոլոր իշխանութիւնները, բոլորը, նիւթապէս եւ բարոյապէս, ուղղակիօրէն, գործնականօրէն եւ անվիճելիօրէն, պարտական են, իրենց փոխարէն, ազգային հոգատարութիւն հայթայթող Սփիւռքի այդ բոլոր պատասխանատուներուն:

Այս վերջիններուն մաս կը կազմեն տարիներու ընթացքին անհաշիւ գոհորութիւններով ծնունդ առած եւ մինչեւ այսօր գործող բարեսիրական, կրթական, մշակութային, քաղաքական եւ անշահախնդրօրէն գործող բոլոր այլ կազմակերպութիւնները, ինչպէս նաեւ առանձին անհատներ: Այդ կազմակերպութեանց մէջ անցեալին գործած են եւ այսօր եւս բոլորովին կամուտը եւ անհատոյց կերպով կը գործեն երբեմն համեմատաբար համեստ, բայց նաեւ իրենց տարբեր մասնագիտութեանց մէջ բարձրագոյն արհեստավարժական (professional) պատրաստութիւն. կարողութիւն եւ դիրք ունեցող, այլազան իրաւաբաններ, գիտնականներ, մեծագոյն յաջողութեանց հասած գործարարներ, որոնք դիւրաւ կրնան իրենց նոյն այդ թանկագին ժամերը յատկացնել հաճոյքի եւ կամ խիստ շահաբեր բազմաթիւ այլ աշխատանքներու:

### Անսակնատր Պաշտօնեայի և Նուիրեալ Կամուտի Տարբերութիւնը

Հայաստանի իշխանութիւններուն ուշադրութեան կը յանձնենք այս առիթով, թէ իրենք պարտին համեստաբար գիտակցիլ թէ Հայաստանի մէջ աւելի թէ նուազ յաջողութեամբ, եւ սակայն, շռայլուած պետական այլազան միջոցներով իրենց ստացած մեծ պարգեւավճարումներով կատարած աշխատանքները, Սփիւռքահայր ընդհանրապէս կը կատարէ բոլորովին անհատոյց՝ եւ առաւել եւս ընդհակառակը, իր անձնական ունեցումներէն բաժին մը նուիրելով, այլազան կրթական, մշակութային, բարեսիրական եւ յօգուտ իր համայնքին, աշխատանքներուն իրականացման համար:

Կը մատնանշենք թէ Սփիւռքին մէջ այս բոլորը 111 երկար տարիներէ ի վեր կը կատարուի մեծ դժուարութեամբ եւ տակալին շօշափելի յաջողութեամբ, միայն եւ միայն պահպանելու համար ազգային Հայ նկարագիրը, այս յօդուածով ահա յատուկ լուսարձակի տակ դրուած, Սփիւռքի մեծ հաւաքականութեան:

Այո՛, Սփիւռքը ինքն է որ ամբողջովին կը փոխարինէ անվիճելիօրէն Հայաստանի իշխանութեանց պարտականութիւնը հանդիսացող, եւ սակայն անոնց անկարողութեան պատճառաւ բացթողումը, հսկայական պատասխանատուութիւնը:

### Սփիւռքը Հայաստանի Ռազմավարական Հարստութեան Աղբիւր

Այս հանգրուանին պէ՞տք է նաեւ վերլուծենք Հայաստանի իշխանութեանց, թէ Հայ Սփիւռքին գիտակցից մասը, ուղղակիօրէն հարստութեան առարկայական մեծ աղբիւր է Հայաստանին համար, պայմանաւ անշուշտ, որ օրուան իշխանութիւնները կարողութիւնը եւ գիտակցութիւնը ունենան շինիչ կերպով օգտագործելու այդ հարստութիւնը...: Գուցէ այստեղ պէտք է յիշեցնել թէ շատ յաճախ, մանաւանդ մօտ անցեալին, արդարօրէն մեծ հպարտութեամբ է որ Հայաստանի մէջ կը լուրին հանրային լորձնաշարքն այստարարութիւններ ուր կ'ըսուէր թէ «Եթէ Ատրպէյճանը հարուստ է իր քարիւղով, Հայաստանը աւելի եւս հարուստ է իր Սփիւռքով...»:

Բնականաբար ինչպէս Ատրպէյճանի քարիւղին օգտակարութիւնը կը յայտնուի միայն երբ ան արտահանուի իր ընթերքէն, նոյնպէս ալ Սփիւռքահայութեան օգտակարութիւնը կը յայտնուի մանաւանդ երբ Հայաստանի իշխանութիւնները գիտակցին իրենց պարտականութեան, ջանք եւ հոգատարութիւն տածեն, եւ կազմակերպուած ձեւերով Հայրենիքին մօտեցնեն, փոխանակ ընդհակառակը վանելու, արժանատր Սփիւռքահայերը:

### Եզրակացութիւն

Վերջապէս, հիմնուելով այս յօդուածին մէջ տրուած պատճառաբանուած առարկայական տուեալներուն վրայ, ահա այժմ կը հասնինք ներկայ գրութեան անմիջական եւ գլխաւոր նպատակին եւ Հայաստանի ԱԺ-ի յառաջիկայ ընտրութիւններուն ընդառաջ, մեր խօսքը կ'ուղղենք Հայաստանի այսօրուան իշխանութեանց:

**Բազմամիլիոն թիւ ներկայացնող լայնատարած գիտակցից Հայ Սփիւռքը ոչ թէ տեսականօրէն, այլ՝ առարկայականօրէն անբաժան մասն է Հայ Ազգին: Հետեւաբար որպէս Հայ ազգի միջազգային մակարդակով ընդունուած օրինական միակ հեղինակութիւն, դուք որոշապէս պարտական էք անոր, եւ նաեւ պարտաւոր էք գործադրանքով ընդունիլ գայն իր այդ իսկ հանգամանքով, որպէս անբաժանելի մէկ մասը Հայ Ազգին:**

**Հետեւաբար նոյնպէս, Հայաստանի իշխանութիւնները բնականօրէն պարտաւոր են յառաջիկայ ԱԺ-ին ընտրութիւններու մասնակցութեան պաշտօնական ձեւ եւ առիթ ստեղծել Սփիւռքահայ ներկայացուցիչներուն:**

Անգամ մը եւս, կանխելու համար ակնկալելի անմիջական եւ դիւրին առարկայութիւնները թէ, ընդհանուր կազմակերպչական կառույց չունեցող յունեցող ինչպէ՞ս է որ պիտի նշանակէ իր այդ ներկայացուցիչները, գործնական եւ տրամաբանականօրէն կը մատնանշենք թէ հերթը նախ կը վերաբերի Հայաստանի իշխանութեանց:

Մեր պահանջն է, որ նկատի առնելով այս յօդուածին մինչեւ այստեղ ներկայացուցած հիմնական տրամաբանական պատճառաբանութիւնը, Հայաստանի իշխանութիւնները առաջին հերթին պաշտօնապէս ընդունին ընտրութիւններուն Սփիւռքին մասնակցութեան սկզբունքը: Անկէ յետոյ է, որ միայն Սփիւռքի տարբեր պատասխանատու շրջանակներու պարտականութիւնը պիտի ըլլայ գտնել, ընդհանուրին կարելի չափով բաւարարող ձեւը, եւ նշանակելու իր ներկայացուցիչները:

Մինչ այդ, եւ առայժմ կրկին առաջը առնելով ակնկալելի քաղաքացիական պատկանելիութեան օրէնսդրական խրթին արգելքները, որպէս անվիճելիօրէն գործադրելի տարբերակ՝ կ'առաջարկենք որ Սփիւռքի վերոյիշեալ ներկայացուցիչներուն այս անգամ պաշտօնապէս տրուի ընտրութիւնները վերահսկող դիտորդի հանգամանք:

Գլխաւոր եւ որպէս անմիջապէս գործադրութեան ենթակայ ամփոփ եզրակացութիւն, երբ Հայաստանի ընտրութեանց ներկայ գտնուելու կը հրապարտուի այլազան, նոյնիսկ եւրոպացի կամ այլ պաշտօնական դիտորդ ներկայացուցիչներ, կասկածէ վեր է, թէ Հայ ազգին անբաժան մասնիկը հանդիսացող Սփիւռքահայութիւնը, առաջնահերթութեամբ իրաւունք ունի ինքնուրու, գուցէ այս անգամ նուազագոյնը, «պաշտօնական դիտորդի» հանգամանքով, ներկայ ըլլալու եւ այդպէսով պաշտօնապէս մասնակցից ըլլալու այդ ընտրութեանց:

# ԶՕՐԻ ՊԱԼԱՅԵԱՆ

## ՂԱՐԱՔԱՂԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԺԱՆ ՅԱՌԱԶԱՄԱՐՏԻԿ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

ՅԱԿՈՐ ԱՐԵՏԻՔԵԱՆ



Զօրի Պալայանի (Բալայան) անունը առաջին անգամ լսել էի ուսանողական տարիներում՝ ռուսական հեղինակավոր «Լիթեր-նաթուրնայա կազեթա» («Գրական թերթ») թերթին բարձրագույն արհեստագիտական դասընթացի ժամանակ: Իմ սերունդի տղոց համար հետաքրքրական էր ազգայնորեն շոյիչ էր կարդալ Ստեփանակերտ ծնած, երկրորդականը արտադրել էր Ռուսաստանի (Ռուսաստան) բժշկական համալսարանում՝ շրջանառությամբ երիտասարդ մեր հայրենակիցին ընդգրկումը Հիսուսային բուժիչ ուսումնասիրմամբ զբաղող արշավախումբերում կազմելն անհրաժեշտ էր, Սիպերիոյ բնակիչներում կեանքը նկարագրող լրագրողի շուրջ ստեղծուած ընդհանուր հետաքրքրությունը, առօրեայ մամուլին անդին՝ անոր ճանապարհորդական նորավեպերում հրատարակումը առանձին գիրքերով, նախ ռուսերեն, ապա՝ թարգմանաբար նաև հայերեն: Յափշտակությամբ իմ սերունդի տղաքն ու աղջիկները, նաև սփիւռքահայ ուսանողները կր կարդայինք իրարայայտող գիրքերը Զօրիին՝ մեկ տասնեակէ արեւելի: Բայց մեր հրճուանքը արեւելի մեծ եղաւ, երբ իմացանք, որ Զօրին հրատարակել է մաս կազմելու նորվեկացի աշխարհահռչակ նաւագնաց Կուրտ Հէյերթայի արշավախումբին:

Այդ միջոցին յանկարծակի փոխուեցաւ Խ. Միւրթեան գերբին կեանքը, երբ հրապարակ ելաւ կորբաշովեան փերետրոյթայի ալիքը: Ռուսական թերթերը ամենօրեայ ռեժիմով կը գրէին՝ արդէն նախկին կայսրութեան մէջ տիրող յոռի բարքերուն մասին, անշուշտ նաեւ՝ Խ. Հայաստանի: Վար առնուած վարագոյրին տակէն կը ցցուէին ճշմարտութիւններ, մեր պարագային նաեւ՝ ազգային ու համազգային մեր կորուստներուն, ահաւոր անիրաւութիւններուն մերկ, բոլորովին մերկ պատմութեան մանրամասնութիւնները: Հայրենական մեր պատմաբաններուն յառաջադէմ մէկ մասը, գլխաւորութեամբ Զօրիի, Նիքոլայ Յովհաննիսեանի, ... Այվազեանի, Լեւոն Հայկ-վերդեանի եւ մի քանի ուրիշներու, համարձակ հրապարակաստութեամբ բարձրացուցին Արցախի, Նախիջեանի եւ ազգախել միւս հարցերու պահանջատիրութեան խնդիրը, մինչ Պաքուի, Կիրովապատի եւ յատկապէս Մուսկալիթի մէջ տեղի կ'ունենային Հայոց ցեղասպանութեան նորանոր դրամագները, անշուշտ տեղական՝ խեղճուկ զենքերով հայոց ինքնապաշտպանական մարտերը: Զօրին գլխաւոր իրազեկ անձն էր այդ օրերուն, նաեւ՝ առաջին իրազեկած անձը, որ Օփերայի՝ Ազատութեան հրապարակի աստիճաններուն վրայ, համախոս ուրիշ հայրենասերներու հետ, ոգի, շունչ, պայքարելու ծրագիր կու տար հազարաւոր մարդոց, մինչ Սփիւռքը, տակաւին անտեղեակ խորքային այդ իրադարձութիւններուն՝ աղճատ լուրերով կը հետեւէր այդ բոլորին, մինչեւ...

...1988-ի գարունն էր կարծեմ, արդէն «Չարթօնք» խմբագրատան մէջ: Մեր անճաման խմբագրապետին եւ ուսուցիչին՝ Գերսամ Ահարոնեանի օգնականն էի: Գլխաւոր պարտականութիւններէս մէկը, բացի հակիրճ լուրեր հաւաքելէ եւ առօրեայ թղթակցութիւններ պատրաստելէ, մինչեւ կէսօրուան ժամը 2-ը, երբ խմբագրապետս արդէն հասած կ'ըլլար խմբագրատուն, իր սեղանին վրայ գետեղելն էր թղթակցներէն ստացած նիւթերը, զանազան երկիրներէ հասած նամակները, լուսանկարները, ինչպէս նաեւ՝ ռամկավար եւ այլ թերթերու ուշագրաւ յօդուածներն ու լուրերը՝ Պոլիսէն, Փարիզէն, Եգիպտոսէն, Ամերիկայի երկու ափերէն ու Քանադայէն: Անոնց մէջ կ'ըլլային նաեւ խմբագրապետիս ուղղուած պահարանները, որոնք ինքզինքիս իրաւունք չէի տար բանալու:

Այդ օրը, չեմ յիշեր ո՞ր օրը, Գերսամի սեղանին դրուած նիւթերուն մէջ կար նաեւ գոց՝ մեծկակ ծրար մը, առանց որեւէ մակագրութեան:

Կարճ ժամանակ անց խմբագրապետին սենեակէն, որուն դուռը միշտ բաց էր իմինիս հետ, լսուեցաւ Գերսամին ձայնը. «Յակոբ, հոս եկուր: Ասիկա իջեցուր վար, յանձնէ Թովմասեանին»: Խօսքը անշուշտ մեր Փրոֆետորին կը վերաբերէր, որ Թէքէեան Կեդրոնի ներքեւի յարկը, Թաղէտեսներու վարձակալած բաժնին մէջ ունէր իր առանձնասենեակը, ուրկէ կը ղեկավարէր Ռամկավար Ազատական կուսակցութեան ու Թէքէեան Մշակութային Միութեան գործերը, հոնկէ՛ ղէպի շէնքի միւս յարկերը դիտելու կարելիութեամբ: Նամակածրարը այն էր, գոր նկատել էի՝ առանց մակագրութեան ու որկողի հասցէի:

Իջեցուցի վար, տուի կուսակցապետին, ու նկատելով անոր ղէմքի հանգիստ արտայայտութեան՝ զգացի, որ ծանօթ, լաւ ծանօթ էր այդ պահարանին: Փրոֆետորը, պատուական այդ մարդը, անվրդով, ըսաւ՝ «Վաղուան թերթին մէջ հրատարակեցէք»: Հրահանգողը թերթին արտօնատէրն էր, կուսակցապետը, ինչ որ զիս զարմացուց: Ուրեմն ամենակարող Գերսամ Ահարոնեանը ինչ-որ բան հրատարակելու համար վաւերացումը կամ արտօնութիւնը կը ստանայ կուսակցապետի՞ն. subordination-ի ուշագրաւ օրինակ...

Յաջորդ օրը հրատարակեցինք այդ գրութիւնները, առաջինը՝ Մերո Խանգաղեանի Բաց նամակն էր ուղղուած Լեւոնիտ Պրեժնեյին, միւսը՝ Բագրատ Ուլուբաբեանի պատմական ակնարկ-բնութագրութիւնը, Լեւոնային Ղարաբաղի վիճակի, անոր ենթակայութեան պատմական, անարդարութեան իրավիճակի վերաբերեալ:

Յաջորդ առաւօտ անձամբ ստացայ զանգը ՀՅԴ-աշակցութեան պաշտօնաթերթ «Ազդակ» խմբագրապետ Երուանդ Փամպուքեանին հարցուց. «Վաւերակա՞ն է ձեր հրատարակած յօդուածը»: Յարգարժան խմբագրին պատասխանս եղաւ քիչ մը հեզմական. «Մենք ոչ վաւերական ոչինչ կը

հրատարակենք»: Ակնարկս կը վերաբերէր նոյն տարուան Ապրիլի 1-ին «Ազդակ» ի մէջ լոյս տեսած կատակ-ապատեղեկատուութեան մը, ըստ որում, իբր, Խ. Միւրթեան կառավարութիւնը Ղարաբաղն ու Նախիջեանը վերադարձուցեր է Խ. Հայաստանին: Չար կատակ՝ որ պահ մը խռովեց լիբանանահայութիւնը:


Հետագային, արդէն Երեւանի մէջ, «Ազգ» խմբատուն Զօրիի յաճախակի այցելութիւններէն մէկուն ընթացքին, ընդառաջելով հետաքրքրութեանս՝ Զօրին հաստատեց կասկածս, որ փրոֆ. Թովմասեանին միջոցով ինքն եղած է այդ երկու գրութիւնները ուղարկողը Լիբանան, այն ալ, ըստ իր արտայայտութեան, «Գերսամի թերթին»:

Անշուշտ պատմածս մանրամասնութիւն մըն է ընդամենը, սակայն՝ շատ կարեւոր: Արդարեւ, քաղաքական եւ այլ պայմաններու բերումով Ղարաբաղեան հարցը Հայաստանի մէջ հանրային հրատապ խնդրի, այնուհետեւ Ազգային շարժումի վերածուելէն դեռ բաւական ժամանակ առաջ ազգային օրակարգի ու պահանջատիրութեան վերածուեցաւ Սփիւռքի մէջ՝ թերեւս այն պահէն սկսեալ, երբ «Չարթօնք» ի մէջ լոյս տեսան վերոյիշեալ գրութիւնները, որոնք իսկոյն տարածուեցան ամբողջ հայաշխարհին մէջ շնորհիւ Զօրիին եւ անոր համախոս գործակիցներուն, Հայաստանէն թէ Սփիւռքէն: Զօրին, անկասկած, առաջնորդողն էր այդ շարժումին, մանաւանդ այն բանէն ետք, երբ Լուիզ Միսոն Մանուկեանի հրաւերով շրջեցաւ Ամերիկայի գրեթէ բոլոր հայ համայնքները, շրջապատուած մեր ռամկավար ընկերներով, իսկ արեւելի վճռակամ՝ երբ Մոսկուայի պանդուկներէն մէկուն մէջ, Մեծն Վիքթոր Համբարձումեանի հետ միասին երկարատեւ հացաղուլ յայտարարեցին, եւ միայն երջանկայիշատակ Վազգէն Կաթողիկոսի անձնական այցելութենէն ետք դադարեցուցին յուսահատ այդ քայլը:

Անշուշտ ընթերցողս կրնայ հարց տալ, թէ պէ՞տք է խորանալ մանրամասնութեանց մէջ: Պատասխանս՝ պէ՞տք է: Արցախեան իրաւատիրութեան ու պահանջատիրութեան հարցին մէջ Սփիւռքի ներգրաւումը կարեւոր է, նաեւ այսօր, երբ, այդքան ոգորումներէ, Արցախի համար նիւթական ու մարդկային այդքան զոհերէ ու զոհաբերութիւններէ ետք պէտք է միշտ կենդանի պահել կարեւորագոյն այդ հարցը: Եւ մանաւանդ այսօր, երբ Հայաստանի Հանրապետութեան ներկայ իշխանութիւնները, այդքան անհոգ եւ անպատասխանատու մօտեցմամբ չորին իրենց կարելին պահելու Արցախը հայկական, իսկ հիմա, երբ արեւելի քան 130 հազար արցախցիներ, էթնիկ գտման, բռնագաղթի ենթարկուելով ապաստան գտած են Մայր հայրենիքին մէջ, ուր «կ'արժանանան» նոյն իշխանութիւններու անտեսումին ու մոռացումի քաղաքականութեան եւ, նոյնիսկ հալածանքի...

Զօրի Պալայանը խորհրդանիշն էր ու կը մնայ Ազատ Արցախին: Ան իր պայքարով, գործունէութեամբ, իր ստեղծագործութիւններով ու կենսագրութեամբ, նոյնիսկ յետմահու, կը մնայ տէրը պահանջատիրութեան, մեզի կտակելով պայքարը շարունակելու պարտականութիւնը, այսօր եւ միշտ:

Երեւան



ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ - ՆԵ ՄԱՍՆԱԸԻՐ  
HAMAZKAYIN ARMENIAN EDUCATIONAL AND CULTURAL SOCIETY - NEW YORK CHAPTER

“WORLD-WIDE ARMENIAN COMMUNITIES” LECTURE SERIES

This lecture is sponsored by

LORI HATEM ASQUITH

# ISLAMIZED ARMENIANS OF HAMSHEN

A ZOOM PRESENTATION BY

## AVEDIS HADJIAN

(in Armenian)

THURSDAY, APRIL 23, 2026 AT 8:05 PM EST

Join Zoom Meeting

<https://us02web.zoom.us/j/89225404620?pwd=XYU0Y8AZjU6gPjdm5c9PuQzCSzslPz.1>

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐՈՒՄ

Ըստ Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահ Թրամփի՝ պատերազմի արագընթաց մաքրումը երկկողմանի համաձայնութեամբ զարդեցումի համաձայնութեան փուլի մէջ էր, սակայն առանց արմատական պատճառները լուծելու: Միացեալ Նահանգներ կը փորձէր զսպել իրավիճակը, Իսրայէլ կը վերակողմնորոշուէր, իսկ Իրան կը կլանէր հարուածը եւ կը յարմարուէր կացութեան: Այս բոլորով հանդերձ ոչ ոք կը նահանջէր, եւ բոլորը կը վերադասատրէին իրենց ռազմավարութիւնները:

Տարածաշրջանը հազիւ կը պատրաստուէր պահ մը շունչ հաւաքելու, քաղաքական հարթակները նկատեցին որ ուժերու հաւասարակշռութիւնը եւ զսպման հաշուարկները կը մնային անփոփոխ: Թիրախատրուած երկիրներու ժողովուրդները կանգնած են ոչ թէ խաղաղութեան, այլ կառավարուող զինադադարի առջեւ: Համաձայնեցումը ոչ թէ աւարտ էր, այլ աւելի հանգիստ շարունակութիւն:

## ԼԻՔԱՆԱՆ



«Յաւերժական խաւար» անուանումով գործողութեան ընթացքին իսրայէլական ինքնաթիռները 10 վայրկեանի ընթացքին, Լիբանանի 100 տարբեր վայրերու տարածքին, 160 ռումբ արձակեցին: 303 մարդ յայտարարուած է մահացած, 1770-ը՝ վիրատու, հարիւրաւոր անճանաչելի ածխացած դիակներ, իսկ զոհերու թիւը կը շարունակուի աճիլ: Բացի այդ, Իսրայէլ յայտարարած է, որ առաջիկայ 48 ժամուան ընթացքին առանց նախնական նախազգուշացման պիտի շարունակէ Լիբանանի ռմբակոծութիւնները:

Բոլոր հիւանդանոցները գերյազեցած են, շտապօգնութեան մեքենաները հազիւ կը շրջանառուին մայրաքաղաքին խուճապին մէջ: Տեղի ունեցածը «Հրզպալլայի» դէմ պատերազմէ աւելի, պատերազմ է լիբանանեան հասարակութեան մնացորդներու դէմ: Այս ինքնին ոչնչացման պատերազմ է մեր փխրուն լիբանանեան-ընկերային կառուցումը դէմ:

Շնորհիւ ընկերային ցանցերու, համայն աշխարհի ակնատեսը դարձաւ Իսրայէլի գործադրած ահաւոր սպանդին, որուն որպէս հետեւանք՝ ԱՄՆ նախագահ Տոնալտ Թրամփի հեռախօսակցութեան ունեցաւ Իսրայէլի վարչապետ Պենիափին Նեթանիահուի հետ, որուն ընթացքին խնդրած է անկէ թուլացնել Լիբանանի ուղղութեամբ իրականացուող հարուածները՝ Իրանի հետ բանակցութիւնները չխոչընդոտելու նպատակով:

Միաժամանակ, իրանական պաշտօնեաները սպառնացած են պատասխանել այդ հարուածներուն եւ խզել հրադադարը:

## ՀԱՅԱՍՏԱՆ



Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան, Էսթոնիայի ԱԳ նախարար Մարգուս Յահքնայի հետ ասուլիսի ընթացքին յայտարարած է, որ բազմաթիւ երկիրներ հետաքրքրուած են հայ-ամերիկեան TRIPP նախագիծով: TRIPP-ը կը մնայ Ամերիկայի առաջնահերթութիւններէն մին:

«Հակառակ աշխարհի եւ տարածաշրջանի մէջ ընթացող ոչ այնքան բարենպաստ գործընթացներուն՝ ՀՀ-ի եւ ԱՄՆ-ի միջև երկկողմ աշխատանքները TRIPP-ի իրագործման ուղղութեամբ կը շարունակուին: Այժմ դեռ աշխատանքներու փաստաթղթային փուլն է: Մենք առանձին հարցերու շուրջ միտքեր եւ դիրքորոշումներ անընդհատ կը փոխանակենք ամերիկեան վարչապետի մերկայացուցիչներուն հետ: Յոյսով ենք, որ հնարաւորին տուեալներով շուտ կը թեւակոխենք յաջող՝ շինարարական փուլ»- մանրամասնեց Միրզոյեանը:

ՀՀ ԱԳ նախարարը ընդգծեց նաեւ, թէ որքան ալ TRIPP-ը երկկողմ նախագիծ է, սակայն կը բխի բազմաթիւ երկիրներու շահերէն, ընդգրկելով Չինաստանը, Բորնոպալն ու այլ երկիրներ: «Անոր մէկ ծայրը պիտի դպնայ Ատրայէլ-ճանին, միւս ծայրը աւարտի Նախիջեւանով, բայց տրամաբանական շարունակութիւնը Երասխով հայկական երկաթուղային ցանցն է, Կարս-Գիւմրի երկաթուղային հանգոյցն է եւ Թուրքիայի երկաթուղային ցանցը: Կեդրոնական Ասիայի երկիրները յատկապէս շատ շահագրգռուած են»:

## ՌՌՄԱՍՏԱՆ



Ըստ BBC-ի ռուսական ծառայութեան, Ռուսաստանը եւ Ուքրաինան գոհ-լաճներու մարմիններ փոխանակած են: Մոսկուան Քիւրեի յանձնած է 1000 դիակ, իսկ Քիւրե Մոսկուային՝ 41:

Ուքրաինացի բնիչները բոլոր անհրաժեշտ հետազոտութիւնները ի գործ կը դնեն վերադարձուած դիակներու ինքնութիւնը պարզելու համար, ապա մատուցները կը յանձնուին անոնց ընտանիքներուն:

## ԱՆԳԼԻԱ



Մեծն Բրիտանիոյ Պաշտպանութեան նախարար Դոն Հիլին յայտարարած է, որ Անգլիոյ հիսիսային ջուրերուն մէջ երեք ռուսական սուզանաւ «գաղտնի» գործողութիւն իրականացուցած են խողովակաշարերուն շուրջ:

Ան յայտնած է նաեւ, որ բրիտանական ռազմանաւ եւ ինքնաթիռներ տեղակայուած են Մոսկուայի «չարամիտ» գործունէութիւնը կանխելու համար, եւ Ատլանտեան ովկիանոսին մէջ Մեծն Բրիտանիայի ենթակառուցումներուն հասցում որեւէ վնաս, կամ «ապացոյց» չկայ:

Ամիջապէս դիմելով Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Բութինին՝ նախարար Հիլին ըսած է. «Մենք կը տեսնենք ձեզ: Մենք կը տեսնենք ձեր գործունէութիւնը մեր խողովակաշարերուն շուրջ, սակայն դուք պէտք է իմանաք, որ զանոնք վնասելու որեւէ փորձ հանդուրժելի չեն եւ կ'ունենան լուրջ հետեւանքներ»:

ԱՐԱ ԲԱՐՍԱԹԵԱՆ



**Centre for Western Armenian Studies**  
Արեւմտահայազիտական Ուսմանց Կեդրոն

**Summer Intensive Courses in Western Armenian 2026**

We are proud to announce that our flagship Summer Intensive Courses 2026 will be taking place in Athens. We look forward to welcoming students new and old to Greece to explore the beauty of Western Armenian in this historic city.

**The courses will run at three levels:**

**Elementary:** Monday 6 July–Friday 31 July 2026  
**Intermediate:** Monday 3 August–Friday 28 August 2026  
**Advanced:** Monday 7 September–Friday 2 October 2026

Each month-long course consists of 110 hours of teaching. The fee for each course is £1300. Scholarships are available.



# ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՄ



Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

## ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ 60/40

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության (ՀԲԸՄ) դահլիճում մեծ շուքով մեկնարկեց երգիչ, կոմպոզիտոր Վահան Արծրունու յոթելեանական համերգաշրջանը՝ նուիրում արուեստագետի 60 եւ բեմական գործունեության 40-ամեակներին:



Միջոցառումը կրում էր համերգ-ասուլիսի ձևաչափ, որի ընթացքում երաժիշտը ոչ միայն ներկայացրեց իր սիրուած ստեղծագործութիւնները, այլեւ մոդերատոր Ալիսա Քալանթարեանի հետ գրոյցում անդրադարձաւ իր ստեղծագործական ուղուն: Համերգային հատուածում Վահան Արծրունու հետ ելոյթ ունեցան տաղանդաւոր երաժիշտներ Նելլի Մանուկեանը, Մադաթ Ասանեսովը, Արթուր Մոյիսովիչը եւ Լեւոն Հախվերդեանը:

Երեկոն կազմակերպուել էր ՀԲԸՄ 120-ամեակին նուիրում միջոցառումների շրջանակում եւ սկիզբ դրեց մի շարք մշակութային իրադարձութիւնների, որոնք դեռ սպասում են յոթելեանական տարուայ ընթացքում:

## ԿԱՅԱՑԱՒ «ԱՇՈՒՂՆԵՐԻ ԵՐԿԻՍՈՍՈՒԹԻՒՆ» ՅՈՒՐԱԳՐՈՎ ԿՈՒՆԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԵՐԳԸ



Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի «Առնօ Բարաջանեան» համերգասրահում կայացաւ Ժողովրդական երաժշտութեան եւ պարի ազգային կեդրոնի Հայաստանի ազգային նուագարանների պետական նուագախմբի «Աշուղների երկխօսութիւն» խորագրով յոթելեանական համերգը: Երաժշտական երեկոն նուիրում էր հայ աշուղական արուեստի երկու խոշոր ներկայացուցիչների՝ Աշուղ Ջիւանու ծննդեան 180 եւ Աշուղ Հաւասու ծննդեան 130-ամեակներին:

Համերգը դարձաւ ոչ միայն յոթելեանական յարգանքի տուրք, այլեւ գաղափարական կամուրջ՝ անցեալի եւ ներկայի միջեւ: Նուագախումբը հանդէս եկաւ բազմաժանր կատարումներով՝ ներկայացնելով ինչպէս լայն հանրութեանը ծանօթ, այնպէս էլ հազուադէպ հնչող ստեղծագործութիւններ:

Երեկոյի ընթացքում հնչեցին Ջիւանու եւ Հաւասու քնարական, հայրենասիրական եւ փիլիսոփայական երգերը՝ Հայաստանի ազգային նուագարանների պետական նուագախմբի երաժշտական ղեկավար եւ գլխաւոր դիրիժոր՝ Նորայր Դաւթեանի (ՀՀ վաստակաւոր արտիստ) ղեկավարութեամբ եւ սիրուած մեներգիչներ՝ Վարդան Բաղալեանի, Դաւիթ Խաչատրեանի, Արէլ Արէլեանի, Հերիքնազ Պօլոյեանի, Մարինէ Նանեանի կատարմամբ, ստեղծելով հնչիւնային հարուստ միջավայր՝ փոխանցելով աշուղական խօսքի խոր գալայականութիւնն ու դրամատիզմը:

«Աշուղների երկխօսութիւն» խորագիրը խորհրդանշական էր. այն ընդգրծում էր ոչ միայն երկու հեղինակների միջեւ գաղափարական ու գեղարուեստական կապը, այլեւ ժամանակների երկխօսութիւնը:

Համերգը եւս մէկ անգամ ընդգծեց աշուղական արուեստի կենսունակութիւնն ու արդիականութիւնը՝ հաստատելով, որ ազգային երաժշտական ժառանգութիւնը շարունակում է մնալ հայ մշակութային ինքնութեան անբաժանելի մաս եւ ներշնչանքի աղբիւր նոր սերունդների համար:

## ԲԱՅՈՒՅՑ «ՄԻՐՈՅ ԴՆԹ» ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Ժամանակակից արուեստի բանաբանում առաջին անգամ բացուեց ժամանակակից արուեստագետ Նանա Արամեանի «Միրոյ Դնթ» խորագիրը կրող անհատական ցուցահանդէսը:



«Միրոյ Դնթ» ցուցահանդէսը արտայայտում է նրա արուեստի առանցքային գաղափարներից մէկը. կապը ներկայացում է ոչ թէ որպէս իտէալականացում զգացմունք, այլ որպէս փրկարար եւ պահանջկոտ կառուցուածք՝ անտեսանելի, բայց կենսական, որի միջոցով պահպանում է մարդկային ներկայութիւնը:

## ՀԱՄԵՐԳ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԵԻԹԱՐ ՄԵԲԱՍՏԱՑՈՒ 350-ԱՄԵԱԿԻՆ

Այս տարի լրանում է հայ նշանաւոր հոգեւորական, գիտնական, բանաստեղծ, կոմպոզիտոր եւ Մխիթարեան միաբանութեան հիմնադիր Մխիթար Մեբաստացու 350-ամեակը, որն ընդգրկւում է ԿԳՄՍ նախարարութեան այս տարւայ յոթելեանական ծրագրերի ցանկում: Կոմիտասի անուան կամերային երաժշտութեան տանը տեղի է ունեցել բացառիկ համերգ՝ նուիրում Մեբաստացու յոթելեանին:



Գիրիժոր Յարութիւն Արզումանեանի ղեկավարութեամբ Հայաստանի պետական կամերային նուագախումբը եւ Երեւանի պետական կամերային երգչախումբը ներկայացրել են հայկական հոգեւոր երաժշտութեան բազմադարեայ ժառանգութիւնը, որի առանցքում Մխիթար Մեբաստացու ստեղծագործական եւ մտաւոր վաստակն է:

Համերգային ծրագրում ընդգրկուած ստեղծագործութիւնները ներկայացրել են յատուկ կամերային երաժշտական կազմի համար կատարուած մշակումներով, որոնք լայն հանրութեան համար առաջին անգամ են հնչել:

## «ԱՁՆԱԴՈՒԹԻ ՁԱՅՆ» ՏԻՏԻԱՆՈՅԻ ՀԱՄԵՐԳԸ ԿԱՅԱՑԱՒ

Միրահարների տօնին էր նուիրում Տիտիանոյի բացառիկ համերգը «Արամ Խաչատրեան» համերգասրահում:

Տիտիանոն (Titiano) ֆրանսիացի երգիչ է, ում ձայնային տեմբրը յաճախ համեմատում են լեգենդար Շառլ Ազնաւուրի հետ: Նա յայտնի է իր ռոմանտիկ երգացանկով եւ կատարումներով, որոնք յաճախ ուղեկցում են սիմֆոնիկ նուագախմբի կողմից, ստեղծելով իւրայատուկ մրցնոլորտ:

Բացառիկ երեկոյի ընթացքում ֆրանսիացի երգիչը, «Ազնաւուրի ձայն» անուանուող Տիտիանոն հիացրեց ներկայից ու նաեւ զարմացրեց իր հրաշալի կատարմամբ հայերէն «Խենթ աղջիկ» երգով,



որն էլ ընդունուեց երկարատեւ ծափերով ու ողջոյններով:

Միոյ ամենագեղեցիկ երգերը հնչեցին սիմֆոնիկ շքեղութեամբ՝ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նուագախմբի ուղեկցութեամբ, իսկ դահլիճում իւրաքանչիւր ակորդ վերածուեց զգացմունքի:

Աւելացնեն նաեւ, որ համերգն ուղեկցում էր Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նուագախմբի ելոյթով, մայեսքո Երուանդ Երզնկեանի ղեկավարութեամբ:

ՄԱՐԻՏԱ ՄԱԿԱՐԵԱՆ  
Երեւան

**ՈՒՇԱԿՐՈՒԹԻՒՆ**

**ՄԱՅԻՍ** Շաբաթաթերթը

կարելի է կարդալ  
[www.baikarweekly.com](http://www.baikarweekly.com)  
 կայքէջով

# ՀԲԸՄ-Ի ՆԱԽԱԳԱՆ ՍԵՄ ՍԻՄՈՆԵԱՆԻ ԱՅՅԸ ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ` ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՆ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՅԱԿԱՆ ԿԱՊԵՐՈՒ ՍԵՐՏԱՅՄԱՆ ՈՒՂՂՈՒԱԾ ԻՐ ՇՐՋԱՅՅԵՐՈՒ ԾԻՐԵՆ ՆԵՐՍ

Լուս Անճելըսի եւ շրջակայքի, ինչպէս նաեւ Ֆրէզնոյի հայ համայնքներուն համար նախատեսուած այցելութեան յատուկ ծրագիրը, Նախագահ Սեմ Սիմոնեանի կողմէ նախաձեռնուած ծանօթացման եւ հաղորդակցական կապերու սերտացման ուղղուած համընդհանուր իր շրջայցերուն կարեւոր մէկ բաժինը կը կազմէր:

13-15 Մարտ 2026-ին, Նախագահ Սեմ Սիմոնեան եւ իր տիկինը Սիլվան, իրենց ընկերացող պատուիրակութեան հետ միասին, առիթը ունեցան հանդիպումներու եւ ձեռնարկներու շարքով մը մօտէն ծանօթանալու սփիւռքահայ համայնքներու մեծագոյններէն մին հանդիսացող Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Ափի շրջանակին: Նախագահին եւ իր տիկինը ընկերացող պատուիրակութեան մաս կը կազմէին ՀԲԸՄ-ի Պատուոյ Նախագահ Պերճ Սեդրակեան, նաեւ Կեդրոնական Վարչութեան, Հոգաբարձական Խորհուրդի, Ռազմավարական Խորհուրդատու Խորհուրդի եւ Կեդրոնական Գրասենեակի կառավարչական կազմի անդամներ:

**Այց Լուս Անճելըս եւ Շրջակայք**  
13 Մարտին, ՀԲԸՄ-ի պատուիրակութեան կազմը ջերմ ընդունելութեան արժանացաւ ՀԲԸՄ-ի Մանուկեան Տեմիրճեան Վարժարանէն ներս, որ նոյն շաբաթավերջին մեծ շուքով կը պատրաստուէր նշելու իր հիմնադրութեան 50-ամեակը: Ներկայ էին նաեւ Ս. Պետրոս Հայաստանայայց Առաքելական Եկեղեցոյ հովիւ Տէր Շնորհք Ասագ Քահանայ Տեմիրճեան, նախկին տնօրէն Յակոբ Յակոբեան եւ նախկին փոխ-տնօրէն Դոկտ. Էլի Անդրէասեան:



ՀԲԸՄ-ի Նախագահ Սեմ Սիմոնեանի Շրջայցը Քալիֆորնիա, 4/3/2026  
ՀԲԸՄ-ի Նախագահ Սեմ Սիմոնեան եւ իր տիկինը Սիլվան ջերմ ընդունելութեան կ'արժանանան ՀԲԸՄ-ի Մանուկեան Տեմիրճեան Վարժարանին մէջ:

Դպրոցի Նազարեան Մարգարիտային ներս կազմակերպուած հանդիսութեան ընթացքին ելոյթներ ունեցան Նախագահ Սեմ Սիմոնեան, դպրոցի կառավարչական կազմի անդամներ, Աշակերտական Խորհուրդի անդամներ եւ այլ հիւրեր, որոնց շարքին` Լուս Անճելըսի Հայաստանի Հիւպատոս Աննա Աւետիսյան, նաեւ Լուս Անճելըսի Քաղաքապետարանի Խորհուրդի անդամ Ատրին Նազարեան: Յայտագրին մաս մը կազմէր նաեւ պարային համոյթ մը աշակերտութեան կատարումով: Ապա դպրոցի տնօրէնութեան առաջնորդութեամբ հիւրերը այցելեցին դպրոցի տարբեր բաժինները, որոնց շարքին նաեւ դպրոցի հանդիպակաց կողմը գտնուող նոր գնումը հողատարածքը, որ յատկանշական ձեռքբերում մըն էր վարժարանի ընդարձակուող համալիրին եւ անոր շարունակուող վերելքին ի նպաստ:

Արտեմիա Նազարեան նախամանկապարտէզի բաժնին մէջ հիւրերը հաճե-



ՀԲԸՄ-ի Նախագահ Սեմ Սիմոնեանի Շրջայցը Քալիֆորնիա, 4/3/2026  
ՀԲԸՄ-ի Մանուկեան Տեմիրճեան Վարժարանի աշակերտներ ելոյթ կ'ունենան յատուկ հանդիսութեան ընթացքին:

լի հանդիպում մը ունեցան դպրոցի ամենակրտսէր մանուկներուն հետ, վայելելով անոնց ելոյթը: Այցելումներուն համար տպաւորիչ էր նորակառոյց Գործակցական Ռսման Կեդրոնը զորս ներկայացուցին Աշակերտական Խորհուրդի Անդամները, ցուցաբերելով իրենց առաջնորդական ձիրքերը: Ռստմանական Ծրագրի եւ Ռստման եւ Նորարարութեան Տնօրէն Դոկտ. Նաթալի Պէրպէրեան ընդհանուր պատկերացում մը տուաւ դպրոցի գրադարանին մասին, իսկ դպրոցի հոգաբարձութեան եւ ՀԲԸՄ-ի Ամերիկայի Արեւմտեան Ափի Շրջանակային Վարչութեան Ատենապետ Գեորգ Զօրեան, ներկայա-

ցուց Նորարար Գիտաշխատանոցը, որուն կրկնօրինակը կը գործէր նաեւ ՀԲԸՄ-ի Փաստաթղթային Կեդրոնէն ներս: Ի վերջոյ հիւրերը հիւրասիրուեցան դպրոցի ծնողական խորհուրդի կամատր մայրերու աշխոյժ յանձնախումբին կողմէ, Նազարեան Մարգարիտայի գաւիթին մէջ:



ՀԲԸՄ-ի Նախագահ Սեմ Սիմոնեանի Շրջայցը Քալիֆորնիա, 4/3/2026  
ՀԲԸՄ-ի կեդրոնական ղեկավարութեան անդամներ, Լուս Անճելըսի եւ շրջակայքի համայնքային ղեկավարներու ընկերակցութեամբ:

Նոյն օրը երեկոյեան, մասնաճիւղի, յանձնախումբերու եւ Երիտասարդ Արիեստավարժներու ղեկավարներ, Լուս Անճելըսի եւ շրջակայ շրջաններէն, համախմբուած էին ՀԲԸՄ-ի Վաչէ եւ Թամար Մանուկեան Մշակութային Կեդրոնէն ներս, մտերմիկ հանդիպումի մը եւ կտր սեղանի շուրջ զրոյցի մը



ՀԲԸՄ-ի Նախագահ Սեմ Սիմոնեանի Շրջայցը Քալիֆորնիա, 4/3/2026  
ՀԲԸՄ-ի Նախագահ Սեմ Սիմոնեան, համաշխարհային ղեկավարութիւնը եւ Արեւմտեան Շրջանի ներկայացուցիչները կը նշեն ՀԲԸՄ-ի 120-ամեակը:

համար: Արեւմտեան Ափի Ատենապետ Գեորգ Զօրեանի եւ Վարիչ Տնօրէն Գոհար Սթանպոլեանի կողմէ համադրուած այս զրոյցի ընթացքին, շրջանի ղեկավարութիւնը առիթը ունեցաւ զեկուցելու գլխաւոր նախաձեռնութիւններու մասին, ներկայացնելով նաեւ իրականացուող բազմաթիւ յայտագիրները եւ գործունէութիւնները:

Այս առիթով, մշակութային կեդրոնը վերածուած էր ընդունելութեան շքեղ տարածքի մը, երաժշտական կատարողութեամբ եւ ՀԲԸՄ-ի 120-ամեակի կարկանդակով, որ խորհրդանշական յաւելելալ իմաստ մը կու տար Մանուկեան Տեմիրճեան Վարժարանի 50-ամեայ հանգրուանին, ընդգծելով թէ անհկա մաս կը կազմէր հայ ժողովուրդին նուիրուած կազմակերպչական անելի ծաւալուն յանձնառութեան մը:

Շաբաթավերջի գագաթնակէտը անշուշտ Մարտ 14-ի շքահանդէսն էր, նուիրուած ՀԲԸՄ-ի Մանուկեան Տեմիրճեան Վարժարանի 50-ամեակին: Իր փայլով արտակարգ յոբելիական այս հաւաքոյթը, որուն ներկայ էին տեղական համայնքէն եւ աշխարհի տարբեր կողմերէն ժամանած մօտ 900 դպրոցի հաւատարմներ եւ հիւրեր, ոչ միայն կը նշէր բարձրորակ կրթութեան այս օճախին տասնամեակներու վրայ երկարող յաջողութիւնները եւ դրոշմը, այլեւ առիթ կը հանդիսանար նուիրահաւաքի, գոյացնելով 4 միլիոն ամերիկեան տոլարի գումար մը ի նպաստ դպրոցի ապագայ ծրագիրներուն:



ՀԲԸՄ-ի Նախագահ Սեմ Սիմոնեանի Շրջայցը Քալիֆորնիա, 4/3/2026 - ՀԲԸՄ-ի Մանուկեան Տեմիրճեան Վարժարանի 50-ամեակի շքահանդէսի ընթացքին, Սիւան Սիւանեան կը պարգեւատրուի Սիւրբեան Պօղոս Նուպար բարձրագոյն շքանշանով:

«ՀԱՍԿ ՏԱՐԵԳԻՐՔ»-ը մեր սեղանին վրայ է - 2

ԵԹԷ ԿԸ ՍԻՐԵՆՔ ԴԵԳԵՐԻԼ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ...

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ԼԵՒՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ (sharoyanlevon@gmail.com)

Կը շարունակենք դեգերիլ հայագիտության աշխարհին մէջ՝ մեր ծունկերուն վրայ դրած «Հասկ Տարեգիրք»-ի նորագոյն հատորը, զոր կը թերթատենք խառնիխառն՝ մերք հակելով արեւմտահայերէն, մերք ալ՝ արեւելահայերէն ուսումնասիրութեան մը վրայ, հաւասար յարգանքով ու գնահատանքով:

Կը նշարենք ձեռագրագիտական քանի մը ուսումնասիրութիւններ: Չեռագրագիտութիւնը, որու այժմու մայր օճախը Երեւանի պանծալի Մատենադարանն է, հայագիտութեան հնագոյն ճիւղը կը ներկայացնէ: Մեր հայրենի ձեռագրագիտները կ'աշխատին մեղուներու սման. շարունակ կը յայտնաբերեն նորութիւններ: Այսպէս, Արմէն Մալխասեան (գիտաշխատող՝ Երեւանի Մատենադարանը) անդրադարձումներ եւ ճշդումներ ունի Հալէպի երբեմնի համբաւաւոր առաջնորդ Արտաւազ արք. Սիրմէեանի Ս. Քառասուն Մանկունք եկեղեցոյ «Յուցակ ձեռագրագ»-ին մասին (տպուած՝ Երուսաղէմ, 1935-ին): Ծաւալուն աշխատասիրութիւն մըն է Հայաստանէն Արուսեակ Թամրազեանի յօդուածը, որ նմանապէս հիմք ընդունելով Արտաւազ արք. Գանի մէկ այլ՝ «Նկարագիր Օշին քազարի ձեռագիր ժամագիրքին» (Անթիլիաս, 1933) գործը, մանրամասն կը պեղէ 1319-ին գրչագրուած այդ հարուստ ու բազմաբնոյթ ձեռագիրը՝ նկարագրողումներու, լուսանկարատեսութեան եւ պարունակութեան տեսակետ: Իսկ Վահէ Թորոսեան (Երեւանի Մատենադարանի փոխտօրէն) դիտարկումներ կ'ընէ Սիսի «Հայր Մաշտոց»-ի (կաթողիկոսներու կողմէ օգտագործելի ծիսարան) արքաներու թագադրութեան կանոնին շուրջ, որ լատինական նոյնանման կանոնի մը հայկական մօտաւոր պատշաճեցումն է, Ներսէս Լամբրոնացիի թարգմանութեամբ: Յօդուածագիրը կ'ենթադրէ որ այս կանոնը կ'իյնկէան հայ արքաներու թագադրութեանց ատեն կ'իրարկուած է ԺԳ. դարու կէսէն ետք միայն:



Տարեգիրքին հրամցուցած նիւթերը իսկապէս այլազան են ու կրնան գոհացնել բոլոր ճաշակները: Անթիլիասէն Նարեկ արք. Ալեմեզեանի յօդուածը, գործիական, կը կրէ համապարփակ տեղեկագիրի բնոյթ, քանի որ կը ներկայացնէ Կաթողիկէ եկեղեցոյ եւ Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու աստուածաբանական երկխօսութեան միացեալ յանձնաժողովի քսանամեայ գործունէութեան (2004-2024) պատկերը, ժամանակագրութիւնը: Սրբազանը կը գրէ որ «Միջեկեղեցական յարաբերութիւններուն մէջ իրարու դէմ խօսելու ու իրարու մասին հակաճանաչելու հանգրուաններէն անցած ենք եւ թեակոյսած իրարու հետ աղօթելու, քննարկելու եւ համաձայնելու հանգրուանը»:

Նաւասարդ Մարտոյեանի յօդուածն ալ եկեղեցագիտական է (էջ 97-127), քանի որ կ'ոգեկոչէ Նիկիոյ Տիեզերական Ա. Ժողովին (325 թ.) 1700-ամեակը ու այդ առթիւ մանրամասն կը պատմէ այդ ժողովին «տեղը, դերը, ընդունումը, հողովոյթը եւ այժմեականութիւնը Հայ Եկեղեցոյ մէջ»: Գրութիւնը կը կարդացուի հետաքրքրութեամբ, քանի որ հեղինակը սեղանի վրայ կը դնէ Արիոսականներուն եւ զանոնք մերժող հատուածին երկու հակոտնեայ տեսակետները (Քրիստոսի աստուածային բնութեան շուրջ), որոնք վեճի ու տարակարծութեան նիւթ դարձան Նիկիոյ մէջ: Արիոս դատաւարութեանց, այդ, սակայն Մարտոյեան նկատելի կու տայ որ «Արիոսականներուն փաստերը գորտուր էին եւ իրենց հակառակորդները իսկապէս դժուարութիւն ունեցան այդ փաստերը ջրելու...»: Յօդուածին մէկ այլ շահեկան երեսն այն է, թէ հոն, զանազան մէջբերումներով, շարադրեալ կը գտնենք հին դարերու մեր հայրապետներուն դրական տեսակետները Նիկիոյ դաւանանքին մասին, ինչ որ ապացոյց մը կը հանդիսանայ Հայ Եկեղեցոյ դաւանական անխախտ գիծին:

Արծուի Բախչինեան (Հայաստան) հրատարակութեան տուած է (էջ 131-180) Սիսի Կիլիկեան աթոռի նախկին միաբան (յետոյ կարգաթող) Գիւտ Եպս. Մխիթարեանի «Գրուագներ հայկական Գողթոթայէն (1912-1937)» անտիպ ձեռագիրը, զոր ձեռք բերած է քանի մը տարի առաջ՝ ենթակային դատեր արխիւէն:

Նշմարելի է, որ Հալէպի հարազատ զուակ քանի մը ուսումնասիրներ ալ իրենց նպաստը բերած են Տարեգիրքի այս թիւին: Չորօրինակ, Միհրան Միմասեան (այժմ Երեւան հաստատուած) կը պատմէ թէ ինչպէս Պոլսոյ հայոց պատրիարքարանը 1878-ին երէք հոգեւորականներ (Սրուանձտեանց, Արիստակէ Տէկլանց եւ Վահան Պարտիզակցի) կը յղէ Արեւմտահայաստանի ներքին գաւառները՝ մարդահամար կատարելու եւ վիճակագրական ստոյգ տուեալներ հաւաքելու համար: Մինչ այդ, Կիլիկիոյ շրջանէն ալ նոյնաբնոյթ վիճակագրութիւններ կը դրկուին Պոլիս: Ասոցմէ երէքը, առնչուած՝ Ատանայի, Հալէպի ու Մարաշի նահանգներուն, Միմասեան կը հրապարակէ իր յօդուածով: Հոսկէ կ'իմանանք, որ Հալէպի մէջ, վերոնշեալ թուականին, կար 425 տուն հայ (1632 հոգի), կը գործէին երկու վարժարան ու երկու եկեղեցի՝ ութ քահանաներով (մինչդեռ հիմա՝ յամի Տեառն 2026-ին, ունինք յոկ 5 քահանայ...):

Այլ հալէպցի մը՝ Անի Ֆիշենքեան (նմանապէս Երեւան հաստատուած) տուեալներ փոխանցած է Եղեռնի շրջանին արեւմտահայ գաղթականներու (Աղձնիք գաւառէն պշեղիկցի քրտախօս հայերու) Սուրիա հոսքին ու երկրին հիւսիս-արեւելեան գօտիին մէջ (Ճէզիրէ) անոնց տեղադրման պայմաններուն մասին: Այս զանգուածային գաղթերը կը շարունակուին մինչեւ 1920-ական թուականներու վերջերը, նաեւ՝ 1940-ականներու սկիզբը: Ուշագրաւ է, որ գաղթականները Հասիէի Թէլ Պրաք արանի շրջանին մէջ հիմը կը դնեն իրարու մօտիկ երկու հայ գիւղերու, զորս կը կոչեն Սահակաշէն եւ Մեսրոպաշէն...: Ֆիշենքեան արխիւներէ ջոկելով՝ հրապարակած է իր նիւթին առնչուող տասնեակ մը պաշտօնական նամակներ ալ:

Կուզէիք յատկապէս գնահատել Կիլիկեան աթոռի նորօծ միաբաններէն

Հ. Արրահամ արք. Ճուլֆայեանի սիրուն ակնարկը, որ կը վերաբերի Կ. Պոլսոյ երբեմնի տարաբախտ պատրիարք Զաւէն արք. Տէր Եղիայեանի (1868-1947) սեփական լուսանկարներու հաւաքածոյին: Հ. Ճուլֆայեան, Անթիլիասի մայրավանքի արխիւատունէն (որու վարիչն է ներկայիս) «յայտնաբերած» է լուսանկարներու այդ թրթապանակը ու Տարեգիրքին մէջ հրատարակած, պատշաճ բացատրութիւններով, մատնանշումներով եւ տողատակի ծանօթագրութիւններով: Դիտելով 110-120 տարուան հնութիւն ունեցող այդ սեւ-ճերմակ պատկերները՝ ի սպառ կորսուած ամբողջ պատմութիւն մըն է, որ տխրօրէն կը յառնի մեր դիմաց...:

Տարեգիրքը, ի դէպ, տեղ տուած է նաեւ քանի մը անգլերէն յօդուածներու (Էլիզ Մեներճեան, Սեղա Պարսումեան-Տատոյեան եւ այլք):

\*\*\*

«Հասկ Հայագիտական»-ի մասին մեր այս հպանցիկ ակնարկը կը փակենք քանի մը նշումներով.

-- Պիտի մարթէինք, որ Տարեգիրքը այսուհետեւ յոյս ընծայուի ամէն տարի, ճշդապահութեամբ ու կարգապահութեամբ: Բնաւ պայման չէ որ անկա հրատարակուի 500-600 էջով: Տար-տասներկու գրութիւններ մէկտեղող 300 էջանի ամէնամեայ հրատարակութիւն մը ատելի՛ նպատակայարմար պիտի ըլլար ու դիրքին իրագործելի...:

-- Երանի՛ թէ «Հասկ Հայագիտական»-ը խուսափի գեր-ակադեմական ուսումնասիրութիւններէ, որոնք կը յղուին խմբագրութեան՝ Հայաստանէն: Չենք ուրանար անշուշտ ատոնց գիտական մնայուն արժէքը, սակայն կը խորհիմք որ այս Տարեգիրքին առաքելութիւններէն մին պէտք է ըլլայ հայագիտութիւնը մօտեցնել ժողովուրդին, մանաւանդ սփիւռքի մէջ: Հետեւաբար, այնպէս ընել՝ որ Տարեգիրքին բոլոր յօդուածներն ալ մատչելի ըլլան գրասէր եւ ուսումնասէր հանրութեան, չափանիշ ունենալով միջին մտաւորականը: Գեր-ակադեմական յօդուածները կրնան յղուիլ երեւանեան «Լրաբեր Հասարակական Գիտութիւնների», «Բանբեր Հայաստանի Արխիւների» կամ «Բանբեր Մատենադարանի»-ի նման ծանրաշուք պարբերականներու...:

-- Կարգ մը յօդուածագիրներու գրչին տակ երբեմն նշմարելի են շարահիսակական լուրջ սխալներ: Օրինակ՝ «...հիմնարկէք կատարուեցաւ հոգեւոր միութեամբ տաճող կառոյցի մը, զոր պիտի անուանուէր Ա. Յակոբ»։ Գիշորը՝ «...որ պիտի անուանուէր» (յարաբերական դերանունը ենթակայն է՝ ուղղական հոլովով)։ Կամ՝ «...հրամայական հանդիսացաւ հայ դպրոցի եւ հայ եկեղեցոյ հիմնադրութիւնը, որուն շուրջ պիտի հաւաքուէին...»։ Գիշորը՝ «...հրամայական հանդիսացաւ հիմնադրութիւնը հայ դպրոցի մը ու եկեղեցիի մը, որոնց շուրջ պիտի հաւաքուէին...»։ Կամ՝ «...վէն քարի օծմամբ սկիզբ առաւ հոգեւոր կառոյցի մը պատմութիւնը, որ իննսուն երկար տարիներ իր շուրջ պիտի համախմբէր...»։ Գիշորը՝ «...սկիզբ առաւ պատմութիւնը հոգեւոր կառոյցի մը, որ իննսուն երկար տարիներ...» (յարաբերեալ եւ յարաբերական դերանուն կը դրուին իրարու կից)։ Մէջբերումները կատարած ենք էջ 472-էն։ Կամ՝ «...Վեհափառին ջանքերն ու նախաձեռնութիւնները աստիճանաբար խնդրի վրայ սեւեռեց հայութեան ուշադրութիւնը» (էջ 203)։ Գիշորը՝ «...սեւեռեցին հայութեան ուշադրութիւնը»։ Նմանապէս՝ «...վէները եկեղեցին երկու հակադիր խումբերու քաժնեց» (էջ 100)։ Գիշորը՝ «հակադիր խումբերու քաժնեցին» (յոգնակի ենթակային հետ՝ յոգնակի՝ ստորոգիչ)։ Գարծեալ՝ «Ալ. Մակեդոնացի փիւնիկեան ամբողջ գրաւած էր Ք. ա. 333-32 տարիներուն, որոնց մեծ մասը ընդգրկած էր Սելեւկեան տէրութեան մէջ» (էջ 536)։ Գիշորը՝ «Ալ. Մակեդոնացի Ք.ա. 333-32 տարիներուն գրաւած էր փիւնիկեան ամբողջը, որոնց մեծ մասը ընդգրկած էր Սելեւկեան տէրութեան մէջ» (յարաբերեալ եւ յարաբերական դերանուն՝ քով-քովի)։

-- Կարգ մը յօդուածներու մէջ նշմարելի են ուղղագրական առատ վրէպներ: Օրինակ՝ «դէմ հանդիման» (էջ 98, Գիշոր՝ դէմ-յանդիման), «անփոխառնելի» (էջ 104, Գիշոր՝ անփոխարնելի), «յակումներ» (էջ 108, Գիշոր՝ հակումներ), «կը յանձնուէր», «չէր հանդիպէր», «կըսկէր», «առընչութեամբ» (էջ 109, Գիշոր՝ կը հանձնուէր, չէր հանդիպէր, կը սկսէր, առընչութեամբ), «գողգորթող» (էջ 120, Գիշոր՝ գողգորթող), «Տալրոսեան լեռներ» (էջ 534, Գիշոր՝ Տալրոսեան) եւ այլն:

-- Իսկապէս բաղձալի պիտի ըլլար, որ Տարեգիրքը այսուհետեւ հրաժարէր տողադարձի հին ու շփոթեցուցիչ կիրարկումէն եւ որդեգրէր նորոգ հանգուցեալ տողք. Արմենակ Եղիայեանի առաջարկած տարբերակը, որով տողադարձուած բառերը այլեւ վերջնականապէս կը դադրին ձեւագեղծուած պատկերներով ներկայանալէ...: Օրինակ՝ չտողադարձել «պարտադրուած», այլ՝ «պարտադրուած», չտողադարձել «կոչ-ուած», այլ՝ «կոչ-ուած», չտողադարձել «Լաքա-իոյ, Սուր-իոյ», այլ՝ «Լաքա-իոյ, Սուր-իոյ», չտողադարձել «Աստ-ուած կամ Աստ-ուած», այլ՝ «Աս-տուած», չտողադարձել «ընդգրկուած», այլ՝ «ընդգրկ-կուած»:

-- Մահագրականներու բաժին մը անհրաժեշտ է այլեւս: Պէտք է ոգեկոչել թարմ յիշատակը այն հայագետներուն, որոնք կը բաժնուին մեզմէ՝ ծանր վաստակով ու լեցուն մախաղով...:

-- Անդրադարձ պէտք է կատարուի հայագիտական կամ մերձ-հայագիտական նորատիպ հրատարակութիւններու, մանաւանդ՝ սփիւռքեան ճակատէն: Բարոյական տուրք մըն է ատիկա հանդէպ հայ գիրի սպասատուներուն, որոնք շարունակ կը նօսրանան...:

-- Իւրաքանչիւր հատորի աւարտական էջերուն մէջ ուշագրաւ հատուածներ արտատպել նախորդ ժողովածուին մասին կատարուած գրախօսականներէ կամ անդրադարձումներէ: Մամլոյ ընտանիքի անդամներուն միջեւ կամուրջ մը պիտի ըլլայ ատիկա:

Կողջունենք «Հասկ Հայագիտական Տարեգիրք»-ը խանդավառօրէն: Պիտի սպասենք անոր յաջորդ հատորները:

Հալէպ

# ՀԱՅՈՒՆ ՀԱՅՐԻԿԸ ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄԵԱՆ

206 ՏԱՐԵԿԱՆ.  
(4 Ապրիլ 1820- 29 Հոկտեմբեր 1907)

ՏՈՔԹ. ՍԱՐԳԻՍ ԱՏԱՍ



4 Ապրիլ 2026 թուականին հայ ժողովուրդը, ամենայն հայոց վախճանեալ 125-րդ կաթողիկոսի, Սլըր-տիչ Խրիմեանի ծննդեան 206 ամեակի օրը, անգամ մը եւս մեծ յարգանքով ու երախտագիտութեամբ կը յիշատակէ հայ հողին ու հայ մարդուն սիրահար, ազատատենչ ու վեհատենչ իր անգուգական հայրիկին Սլըրտիչ Խրիմեանի անբառան յիշատակը:

հետեւեալն է:

«ՊԻՆՉ ԲՈՆԵ ՀՈՂԸ, ՄԻ ԹՈՂՈՒՐ ՈՐ ՈՒՐԻՇԸ ՅԱՓՇՏԱԿԷ. ԱՆԳԱՄՍԵ ՈՐ ՀՈՂԸ ԿՈՐՄՆՅԵՍ ՄՈՒՐԱՅԿԱՆ ԿԸ ԴԱՌՆԱՍ»

Այսօր, այս պատգամը արդէն մեզ կը հրաւիրէ խոնարհելու իր ժողովուրդին, իր հողին, իր գիրին, իր լեզուին, իր մշակոյթին, հայ անհատին իրաւունքին պաշտպանը անգուգական հոգեւորական Խրիմեան հայրիկի յիշատակին առջեւ:

Այս պատգամը մեզ կը հրաւիրէ նաեւ մտածելու, թէ արդեօք այսօր որքան կրցած ենք հայրիկին կտակին հաւատարիմ մնալ:

\*\*\*

## ՄԵՌԵԼՈՑ, ՆՆՁԵՑԵԱԼՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՕՐ

Հայաստանեայց եկեղեցոյ օրացոյցին համաձայն, հինգ տաղաւարներու յաջորդ օրը նուիրուած է որպէս ննջեցեալներու յիշատակութեան օր, որ կը կոչենք "Մեռելոց":

Մեռելոցի օրը մասնաւորապէս կը յիշենք ննջեցեալները եւ կ'այցելենք անոնց գերեզմանները, կ'աղօթենք անոնց հոգիներու փրկութեան համար, հաւատքի ու աղօթքի ճամբով կը վերամիանանք իրարու եւ կը բաժնենք մեր տաղաւար տօներու խորհուրդն ու օրհնութիւնները:

Հայ եկեղեցոյ աստուածաբանութեան համաձայն, մեզմէ անվերադարձ բաժնուած սիրելիները ո՛չ թէ մահացած են, այլ ննջած: Մենք կը հաւատանք, որ մեր հանգուցեալ սիրելիներուն հոգիները կը շարունակեն ապրիլ մեզի հետ, սպասելով մեր Տիրոջ երկրորդ գալուստին:

Մեռելոցի օրերուն մեր ննջեցեալներու գերեզմաններուն՝ վրայ կ'աղօթենք, որ մեզ կը գորացնէ անդենական կեանքի մեր հաւատքին մէջ, ննջած մեր սիրելիներուն սէրը կենդանի պահելով մեր սիրտերուն մէջ:

Մեր ննջեցեալներուն համար կ'աղօթենք սրտաբէկ ու գիտակից հաւատքով եւ բարեյոյս ակնկալութեամբ, անոնց հոգիները Աստուծոյ խնամքին յանձնելու աղաչանքով, վստահելով որ Աստուած իր անհուն սիրով լաւագոյնս կը տնօրինէ:

Այս հաւատքով, երբ մեռելոցի օրը մտն մը կը վառենք մեր հանգուցեալներու շիրիմին վրայ, գայն կը վառենք՝ խնդրելով, որ Երկնատը Հայրը իր ողորմութեամբ վերաբերի անոնց հետ եւ թողութիւն շնորհէ անոնց յանցանքներուն եւ իր լոյսի խորաններուն մէջ ընդունի անոնց հոգիները:

Ուստի, "Մեռելոց"-ի օրը, մեր սիրելիներու գերեզմանը այցելելով նախ յիշած կ'ըլլանք զանոնք, ապա անոնց ալ կ'աւետենք Քրիստոսի հրաշափառ Յարութիւնը կամ Յայտնութիւնը եւ կամ թէ տաղաւար տօներու խորհուրդը, հաւատալով որ ժամանակներու աւարտին անոնք ալ եւ բոլոր ննջեցեալները, յարութիւն պիտի առնեն եւ այլ յախտենապէս պիտի ապրին Քրիստոսի հետ:

Սիրելիներ, Եկէք, Մեռելոցի օրը, մեր աղօթքներով յիշենք նաեւ մեր բիւրատը անշիրիմ մնացած մահատակներու յիշատակը:


Աստուած մեր ննջեցեալ հարազատներուն եւ նաեւ մեր ազգի բոլոր մահատակներուն հոգիները լուսաւորէ:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի եւ վաստակն ապրողաց օրհնեալ եղիցի Ամէն:

ՌՈՒՄ ԳԻՏՆԱԿԱՆ ԱԼԵՔՍԱՆՏՐ ՉԵՐԵՈՍԻՆ.

## "ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ ԲՆԻԿ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՂ Է"

«Բոլորը պետք է իմանան, որ Ղարաբաղը հայ ժողովրդի բուն տարածքն է: Եւ ոչ մի Ատրպէյճան ու այլ երկիր այնտեղ լինել չի կարող: Մենք տեսնում ենք, թէ ինչպէս են դեկլարանքներ սխալները յանգեցնում պատերազմների, որոնք ոչնչացնում են այն ամէնը, ինչ կայ այս մեծ երկրի, այս պարարտ հողի վրայ»: Նման յայտարարութեամբ հանդէս է եկել պատմական գիտութիւնների դոկտոր, գիտութեան եւ մշակոյթի զարգացմանն աջակցող ակադեմիկոսների Ասոցիացիայի անդամ, ռուս յայտնի պատմաբան Ալեքսանտր Չերեռնինը (լուսանկարում) "Իրատես" լրատուական գործակալութեանը տուած հարցազրոյցում:



«Տեղափոխուենք կովկասեան մահանգների ստեղծման օրեր. ոչ մի տեղ "Ատրպէյճան" բառ չկայ, ոչ մի տեղ այն յիշատակուած չէ: Նայէք Անդրկովկասի խոշոր քաղաքների բնակչութեանը 19-րդ դարի վերջին: Պարսի եւ Թիֆլիսի բնակիչների մեծ մասը հայեր էին: Ի տարբերութիւն Երեւանի՝ Պարսի եւ Թիֆլիսի խոշոր ներդրումներ էին ուղղում: Եթէ նայենք Երեւանի պատմութեանը, որը հիմնադրուել է Քրիստոսից առաջ 782 թուականին, եւ ուսումնասիրենք նրա ճարտարապետական յուշարձանները, ապա կը տեսնենք, որ նման յուշարձաններ մնացել են եւ Լեռնային Ղարաբաղում, եւ Վանայ լճի մօտ, եւ Կարսի շրջանում. մենք ամէնուր տեսնում ենք մէկ մշակոյթ, մէկ հնագիտութիւն, մէկ լեզու, մէկ հաւատք: Սա է հայ ժողովրդի մեծ պատմութեան ամենագլխաւոր ապացուցողական բազան», - նշել է Ա. Չերեռնինը:

«Այնպէս է ստացուել, որ հայկական սփիւռքը ձեւաւորուել է աշխարհի գրեթէ բոլոր տարածաշրջաններում, եւ դա կապուած է եղել Օսմանեան կայսրութեան կողմից հայերի պատմական հայրենիքում իրականացուող ցեղասպանութեան քաղաքականութեան հետ: Մենք կարող ենք տեսնել հայերին նաեւ Լատինական Ամերիկայում, որտեղ նրանք տեղափոխուել են այդ ծանրագոյն ժամանակաշրջանում: Հայերին կարելի է տեսնել Հիւսիսային Ամերիկայում, Աւստրալիայում, Մերձաւոր Արեւելքում: Հեռանալով հայրենիքից՝ նրանք իրենց հետ տարան պատմական փաստաթղթեր: Եւ Լատինական Ամերիկայում, ասենք՝ Պրագիլիայում եւ Արկենթինայում, մենք կարող ենք տեսնել հայոց պատմութեան եւ ժողովրդի մասին բազմաթիւ փաստաթղթեր: Ի դէպ, չկայ ոչ մի պատմական փաստաթուղթ, որտեղ խօսուի հին Ատրպէյճանի մասին, նման բան գոյութիւն չունի: Մենք ուշադրութիւն ենք հրաւիրում այն փաստի վրայ, որ 1936 թուականից ի վեր, երբ առաջին անգամ կազմաւորուեց Ատրպէյճանը, խորհրդային իշխանութեան քաղաքականութիւնն ճիշդ հունով չէր զարգանում», - ընդգծեց Ալեքսանտր Չերեռնինը...:

## Բաց Նամակ Բոլոր Հայերէն Գրողներուն

Սիրելի եւ յարգելի հայերէն գրող՝  
Մենք հայ ենք, բայց Հայաստան չենք ապրիր: Սփիւռքի մէջ կ'ապրինք: Մեզմէ ոմանք անգլիախօս, ֆրանսախօս, սպանախօս, արաբախօս, եւ այլ երկիրներու մէջ մեծցած, հոն դպրոցներու մէջ դաստիարակուած տեղական լեզուներով, հազիւ քիչ մը հայերէն սորված տան մէջ կամ եկեղեցին, կամ կէտօրեայ հայկական դպրոցներու մէջ, մեծ ջանքով երբեմն հայերէն կը կարդանք, մեծ ճիգով կը պայքարինք հայութիւնը պահելու համար եւ լեզուն պահելու համար, որ արդէն վտանգուած լեզուներու ցանկին մէջ է:

Չէք կրնար երեւակայել որքան կը դժուարի մեր պայքարը երբ մեր կարգացած գրութիւններուն մէջ կրճատումներ կը գտնենք: Կրճատումները, ըլլան անոնք պետական, քաղաքական, եկեղեցական, կամ որեւէ ուրիշ տեսակ, ինչպէս տիտղոսներու կրճատումներ, բոլորն ալ մեզի անձնագօթ են: Մենք հազիւ կրնանք պարզ հայերէն գրութիւններ կարդալ: Անկարելի է այդ կրճատումները հասկնալ:

Ուրեմն շատ կը խնդրենք, հայապահպանման սիրոյն, լեզուապահպանման սիրոյն, ձեր գրութիւններուն մէջ կրճատումներ մի՛ գործածէք, բնաւ, երբեք: Ոչ միայն մենք չենք հասկնար, այլ մեզմէ ետք գալիք սերունդները, երբեք պիտի չհասկնան, եւ գաղափար պիտի չունենան թէ ինչի՞ մասին կը խօսէիք կամ կը գրէիք: Կրճատումներ գործածելով պիտի արագացնէք մեր լեզուին մահը եւ ոչնչացումը:

Անձնագօթ բառեր ընդունելի են, որովհետեւ կրնանք զանոնք բառարաններու մէջ փնտռել, գտնել եւ աւելի հայերէն սորվիլ, բայց կրճատումներու բառարան չկայ: Թերեւս Հայաստանի մէջ կրճատումները իմաստ ունենան, բայց սփիւռքի մէջ բոլորովին անիմաստ են: Անոնք միայն ընթերցումը կը դժուարացնեն եւ շփոթ կը ստեղծեն:

Կրկնենք. Ո՛չ ըսէք բոլոր կրճատումներուն: Որեւէ կրճատում մի՛ գործածէք: Սիրոյն հայութեան, սիրոյն հայերէն լեզուին:

ՍԱՐԳԻՍ ՊԱԼԹԱԵԱՆ

# Հայ Կինը՝ Հայրենասիրական Վսեմ Գաղափարներու Մղիչ Ոյժը

ՆՈՒԱՐԳ ՄԱՏՈՅԵԱՆ-ՏԱՐԱԳՃԵԱՆ



Պատմական Հայ Կնոջ Ուղին,  
Երբեք Չէ Եղած Պարտադրական:  
Հայրենիքի գաղափարը հինն է դարձած է հայուն ազգային կեանքին հիմնական նպատակը:  
Ինչու կ'ըսենք հայ կինը այլ ժողովուրդներու կիներու նման սովորական կին մը չէ:

Այս առումով պիտի յիշենք պատմական հայ կնոջ կերպարը մարմնաւորած Չուիկ Արծրունի Մամիկոնեան, Վահրամ Պահլավունիի մայր Շուշան Տիկիմիր իրենց գաւակներուն մէջ սերմանեցին մարդկային բարձր նկարագիր, անշահախնդիր հայրենասիրական ոգի, հայրենիքի փրկութեան եւ արդարախոտեան մեծ խեղճներ:

Անոնք դարձան Հայրենիքի ազատութեան համար մարտնչող հերոսներ՝ Վահան Մամիկոնեաններ ու Վահրամ Պահլավունիներ, իրենց կեանքը նուիրաբերելով Հայրենիքի վերելքին ու ժողովուրդի բարօրութեան:

Ինչու կ'ըսենք պատմական հայ կնոջ անցած ուղին չէ եղած երբեք պարտադրական: Արդիւնաւոր ան միշտ կրցած է ապացուցել, թէ ազգի մը ճգնաժամային շրջանները կարելի է դիմագրաւել անձնագոհ պայքարով, քաջութեամբ եւ յաղթանակի հաւատքով: Երբ նոյնիսկ մեր պարտութիւնները եղած են բարոյական յաղթանակներ:

Իսկ երբ կը խօսուի կնոջ իրաւունքներու մասին, պէտք է յիշել այն պատմական իրողութիւնը, թէ հնագոյն ժամանակներէն, հայ կինը երբեք չէ ստրկացած:

Այլ միշտ ունեցած է հաւասար իրաւունքներ: Այն ինչ այդ օրերուն Հելլենները դեռ չունէին: Երբ ամուսինը Արքայ էր կինը Արքայակին:

Ահա թէ ինչու պատմութիւնը հայ ազգը դասած է քաղաքակիրթ ազգերու շարքին: Այն ժամանակ, երբ ազգեր ու ժողովուրդներ իրենց հասարակական կեանքը կը կառուցէին Աստուածաշունչի պատուիրաններուն վրայ:

Հայերը դեռ նախապատմական շրջանէն արդէն ունէին հայկական արիական բարոյականութեան չափանիշները, ընտանեկան սրբութիւններու հիմքերը:

Ասոր մէկ վառ օրինակն է, երբ Հայոց Տիգրան թագաւորը Կիւրոսի հարցին, թէ ինչ կու տաս ազատագրելու կինդ, Հայոց Թագաւորը կը պատասխանէ, \_ « Ես կեանքս կու տամ ազատագրելու համար կինս»:

Պատմական հայ կնոջ կերպարը կ'ամբողջանայ իր գթասրտութեամբ ու բարեգործութեամբ: Այս առնչութեամբ արժէ յիշել օրինակ մը:

Երբ Լեւոն Բ. Թագաւորի դուստրը՝ Չապլէ թագուհին, Կիլիկեան Հայաստանի մայրաքաղաք Սիսի մէջ կը հիմնէ հիւանդանոց մը, ուր առանց ազգային ու դաւանական խտրութեան կը բուժուէին բոլորը՝ շինականն ու զօրականը, արհեստաւորն ու ազնուականը:

Չապլէ թագուհին իր գաւակներուն հետ անձամբ հերթապահութիւն կ'ընէր եւ հիւանդ կը խնամէր:

Իսկ երբ 1375-ին Եգիպտոսի Մեմլուքները կը կործանեն Սիս մայրաքաղաքը, Մեմլուք զինուորներէն մէկը տեսնելով Չապլէ թագուհին հիւանդանոցին կործանումը, արտասուելով կ'ըսէ, \_

«Այս ինչ կ'ընէք, երկու տարի առաջ հայերը զիս փրկեցին, այս հիւանդանոցին մէջ բուժեցին»:

Պատմական հայ կնոջ կերպարը թող դառնայ ներշնչումի աղբիւր, դաստիարակելու հայկական արիական ոգիով թրծուած սերունդներ, կերտելու Հայոց Հայրենիքին պայծառ Ապագան...:

«Հայ Կինը Պատմութեան Հետքերով»  
(Հատուածներ)

# ՀԲԸՄ-Ի ՆԱԽԱԳԱՀ ՍԵՄ ՍԻՄՈՆԵԱՆԻ ԱՅՅԸ ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ

(Ծարունակուած 7-րդ Էջէն)

Դպրոցի հոգաբարձութեան ատենապետ Գեորգ Զօրեան եւ տնօրէն Դալիթ Գուկասեան, շնորհակալական խօսքերով ելոյթ ունեցան եւ պարգևատրեցին տասնամեակներ շարունակ դպրոցի վերելքին ծառայած նուիրեալներ:

Իր խօսքին մէջ Նախագահ Սեմ Սիմոնեան շեշտեց կէս դարու հանգրուանային այս նշումին խոր իմաստը: «Յիսուն տարիները կրթական կառոյցի մը կեանքին մէջ պարզ հանգրուան մը չէ որ կը ներկայացնեն: Անոնք հաստատում մը կը հանդիսանան: Դպրոցներ իրենց յիսնամեակին չեն հասնիր իրենց ֆիզիքական կառոյցներով եւ միջակայի կիմնադրամներով միայն: Անոնք կ'աճին ու կը բարգաւաճին անձերու միջոցաւ: Ուսուցիչներ՝ որոնք նուիրուած են իրենց աշակերտներու կրթութեան, ծնողներ՝ որոնք կը զոհաբերեն ապահովելու համար իրենց գաւակներու յաջողութիւնը կեանքի մէջ, պատասխանատուներ եւ հաստատուներ՝ որոնք ժամանակ եւ ճիգ կը ներդնեն հաստատութեան յառաջընթացին համար»:

ՀԲԸՄ-ի Պատուոյ Նախագահ Պերճ Սեդրակեան, մեծարանքի յատուկ ելոյթով մը գնահատեց Սիմոնեան Սիմոնեան, ՀԲԸՄ-ի նախկին Փոխ-Նախագահ, ներկայիս Հոգաբարձուներու Խորհուրդի անդամ, կեդրոնական դեր կատարած է դպրոցի աճումին եւ զարգացման մէջ: Ան երկար տարիներ շարունակաբար եղած է ՀԲԸՄ-ի Մանուկեան Տեմիքեան Վարժարանի հոգատարը, բարերարը, հովանաւորը եւ անոր հոգաբարձական կազմի ատենապետը: Պատուոյ Նախագահը Սիմոնեան Սիմոնեանը պարգևատրեց Միութեան Պօղոս Նուպար բարձրագոյն շքանշանով, որ կը շնորհուի այն անձերուն, որոնք գերազանց ներդրում եւ ծառայութիւն մատուցած են ազգին եւ համայնքին: Ան ի գնահատանք Միութեան նկատմամբ իր անխախտ նուիրումին եւ Մանուկեան Տեմիքեան Վարժարանին վրայ ձգած իր մնայուն դրոշմին, Արեւմտեան Ափ թէ անկէ անդին, ՀԲԸՄ-ի ղեկավարութիւնը իրենց կողմէ դպրոցին կատարած առատաձեռն նուիրատուութեամբ պատուեց Սիմոնեան Սիմոնեանը՝ նաեւ որոշում կայացուց իր եւ իր տիկնոջ Անժէլին անունով կոչելու Սիմոնեան Մատուռի եւ Գործակցական Ուսման Կեդրոնի շրջակայ հրապարակը:

**Այց Ֆրէզնո**  
Մարտ 15-ին, պատուիրակութիւնը աւելի սեղմ կազմով մեկնեցաւ Հիւսիս, դէպի Կեդրոնական Հոլիւտ, ուր անոնք հանդիպեցան ՀԲԸՄ-ի Ֆրէզնոյի եւ



ՀԲԸՄ-ի Նախագահ Սեմ Սիմոնեանի Շրջայցը Զալիֆորնիա, 4/3/2026  
ՀԲԸՄ-ի պատուիրակութեան անդամները կ'այցելեն Միութեան Ֆրէզնոյի կեդրոնը:

շրջակայքի 1910-էն ի վեր գործող մասնաճիւղի վարչական անդամներուն եւ տեղւոյն համայնքին, ծանօթանալու համար անոնց գործունէութեան, նաեւ միասնաբար ծրագրելու հետագայ կարելիութիւններ եւ համընդհանուր համագործակցական նախաձեռնութիւններ: Ապա անոնք այցելեցին ՀԲԸՄ-ի Ֆրէզնոյի կեդրոնը եւ շրջանի հայկական կառոյցները: Այս այցով իր տրանս-բանական լրումին հասաւ Արեւմտեան Ափի աշխոյժ եւ գործունէայ շրջանակին կատարուած պատուիրակութեան արդիւնատր այցելութիւնը:




ՀԲԸՄ-ի Նախագահ Սեմ Սիմոնեանի Շրջայցը Զալիֆորնիա, 4/3/2026  
ՀԲԸՄ-ի Նախագահ Սեմ Սիմոնեան եւ պատուիրակութեան անդամները Ֆրէզնոյի եւ շրջակայքի մասնաճիւղի անդամներուն կ'են:

Այս այցելութեան անդրադառնալով, Նախագահ Սեմ Սիմոնեան նշեց՝ «Արեւմտեան Ափի տարածքին մենք ականատես եղանք գործուն, խորապէս յանձնառու եւ ապագային յարող հաւաքականութեան մը իրականութեան: ՀԲԸՄ-ի 120-ամեայ ոգիով եւ միասնականութեամբ, մենք ինքնավստահութեամբ կը դիմագրաւենք ապագան, նոր իրագործումներու ակնկալութեամբ»:

Մոսկուի Առաջագահի Հեքերով

# ՕՀԱՆԸ ՄԵԿՆԵՑԱԲ, ԲԱՅՑ, ԻՐ ԱԲԱՆԴՆ ՈՒ ՎԱՍՏԱԿԸ ԿԸ ՄՆԱՆ

(ՔԱՌԱՍՈՒՆՔԻՆ ԱՌԻԹՈՎ)



1964-65 տարեշրջան, Երևան-Հայաստան:

Մեծ թիով սփիւքահայ ուսանողներ, տարբեր գաղութներէն, ժամանած են Երևան, իւրաքանչիւրը իր նախընտրած կամ նախասիրած մասնագիտութեան գծով, համալսարանական բարձրագոյն ուսում ստանալու:

Երևանի Պետական Համալսարանը, իմ մեկնակէտս էր, բանասիրական-հայագիտական ճիւղէն վկայուելու, իբրև հայոց լեզուի, հայ գրականութեան ու հայոց պատմութեան եւ յարակից այլ միւթերու մասնագէտ:

Առաջին անգամ հոն հանդիպեցայ ու ծանօթացայ Օհանին, որ Հալէպ-Պէյրութէն ինքն ալ եկած էր հայրենիք, նոյն ճիւղին հետեւելու, մէկ կուրս ինձմէ աւելի բարձր կար-

գավիճակով:

Ոչ միայն այսպէսով կը սկսէր մեր համակուրսական-համալսարանական գոյերթը, այլ՝ աւելի սեղմ ու մտերիմ համակցութեամբ անկէլա ընթացք կ'առնէր մեր ուսումնական ասպարէզին մէջ մեզի դարձնելով անմիջական ընկերներ ու բարեկամներ, մանաւանդ որ՝ նոյն հանրակացարանի «բնակիչ»ներ էինք, մեր արտաուսման կեանքը եւս վայելելով, նախ՝ մնայուն կարօտով յիշելով մեր ծննդավայրերը ու ծնողները, բայց, գործնապէս ու հոգեպէս ապրելով մեր այնքան երագած ու պաշտած մայր-հայրենիքը:

\*\*\*

Յետայնու, մեր աշխարհիկ եւ ընկերային յարաբերութիւնները եւ գործակցութիւնները, մեր դասախօսական յաճախումներուն եւ աշխատանքներուն գուգահեռ, դարձան մնայուն հանգրուաններու խօսեցնող, արտայայտող եւ ամրապնդող փայլուն օղակներ:

Օհանը, իր պատանեկան եւ երիտասարդական տարիներուն, իր ճայնային ունակութիւններով ու կարողութիւններով ճանչցուած էր ու փորձառութիւն շահած նաեւ Հայաստանի մէջ, իր համերգային շնորհներն ու կատարողութիւնները աւելի ուռճացնելով ու զարգացնելով, ազգագրական, աշուղական, հայրենասիրական ու ճազային ելոյթներով, շուտով գրաւելով լայն ուշադրութիւն, հայրենի արուեստագէտ եւ արուեստասէր շրջանակներու մէջ դառնալով ծանօթ եւ երեւելի մեներգիչ մը:

Այն ժամանակ, հայրենի խումբ մը երիտասարդներ, որոնք կազմած էին նուագախումբ մը՝ «Մերփանթիոն» անունով, լսելով Օհանին երգարուեստի յաջող ելոյթները, անմիջապէս զինք հրաւիրեցին մաս կազմելու իրենց անձնակազմին, որպէս առաջնակարգ մեներգիչ:

Իսկ այս նախաձեռնութիւնը, անոր առջեւ բացաւ նոր ու բեղմնաւոր դաշտ մը հայրենի պատկան գեղարուեստական համակարգին մէջ, ընդ որուն, տունալ խումբը, երբ հիւրախաղերու կը մեկնէր այլ հանրապետութիւններ (օրինակ՝ Պալթեան), Օհանը եւս մաս կը կազմէր անոնց, իր ուրոյն եւ ուշագրաւ երգեցողութիւններով արժանանալով համապատասխան գնահատականներու:

\*\*\*

Յետ շրջանաւարտութեան, երբ Պէյրութ վերադարձանք, Օհանին համակ կեանքը եղաւ նուիրում ու ծառայութիւն, խոնարհում ու կառչածութիւն, ազգային-գաղափարական, միութենական-լրագրական, արուեստային-կրթական բնագաւառներուն, իւրաքանչիւր կառոյցէ ներս (ՌԱԿ, ԹՄՄ, ՀԲԸՄ, մամուլ), իր մասնակցութիւնը բերելով, որպէս հաւատացեալ, նուիրեալ, աշխոյժ ու գործունէ հայորդի մը, անխառն գիտակցութեամբ, պատրաստակամ յանձնառութեամբ ու բովա ջանասիրութեամբ, միշտ լիովի եւ յարատեօրէն կատարելով իրեն վստահուած պարտականութիւնները, պատասխանատուի հանգամանքով թէ անդամի անձնուէր ժրջանութեամբ:

Ազգային կեանքը եւ անոր հետ առընչուող գործունէութիւնները, իրեն համար եղան ու մնացին առաջնային օրակարգեր, որոնց նկատմամբ միշտ ցուցաբերեց բծախնդրութիւն, հաւատարմութիւն, ազնուութիւն ու լաւատեսութիւն, իսկ նոր սերունդին նկատմամբ անոր վերաբերմունքը, արժանի էր գնահատանքի, որովհետեւ համոզուած էր, որ անկէլա պիտի ըլլար ապագայի ժառանգորդը ու ջահակիրը, հետեւաբար, անոր նկատմամբ պէտք էր տածել յատուկ դաստիարակութիւն, գուրգուրանք ու գորակցութիւն, միանգամայն:

Լիբանանեան քաղաքացիական պատերազմի պատճառած անկայունութիւնները եւ անապահովութիւնները, ինչպէս այլոց, խորապէս խռոված էր նաեւ զինք եւ պատահական չէր, որ ան ամենուրեք էր (ՀԲԸՄի դարմանատուն, Թէքէեան Կեդրոն, Պայքար Ակումբ, Անդրանիկ Մեան Ակումբ, Միութեան վարժարաններ) նախ՝ համախումբ տէր կանգնելու մեր հաստատութիւններուն, ապա՝ օժանդակութիւն ընձեռելու կարիքատուներուն:

Երկարող ու խորացող կացութիւնը, ստիպուած եղաւ, որ Օհանը գործուղուի արաբական կարգ մը երկիրներ, սակայն, առանց կտրուելու իր շրջանակներուն նեցուկ կանգնելու բարի տրամադրութիւններէն, բարոյապէս ու նիւթապէս, իր աշակցութիւնը բերելով անոնց, ամէն առիթով, երբ իրեն կը դիմուէր:

ՊԱՐՈՅՐ Յ. ԱՂՊԱՇԵԱՆ

Վերադարձին, երբ իրմէ խնդրուեցաւ, որ ան Թէքէեան Կեդրոնէն ներս ստանձնէ վարիչ-քարտուղարի պաշտօն, առանց վարանելու համաձայնեցաւ եւ ձեռնհասօրէն վարեց այդ պաշտօնը, ապա, ՌԱԿ-էն ներս, երբ աստեմապետի պաշտօնին նշանակուեցաւ, դարձեալ կամովին ընդունեց զայն, որպէս գաղափարական դպրոցի գաղափարապաշտ թեկնածու, ու հոն եւս տանելով զգալի ներդրում, թէ՛ կուսակցական, թէ՛ միջ-կուսակցական ոլորտներու մէջ, իր անսակարկ եւ անշահախնդիր մասնակցութիւններով:

\*\*\*

Վստահաբար, կրթական ցանցը, իր դպրոցներով, աշակերտներով, դաստիարակութեամբ եւ, ընդհանրապէս, իր մթնոլորտով եւ ոգեշինութեամբ, ուրիշ երանգ ու բոյր ունէր, իսկ այդ արժէքները, Օհանին համար հարազատ էին, որովհետեւ, հոն կը տեսնէր, իր ներկայ թէ՛ ապագայ ովասիսներու կերտումը, միշտ կապուած՝ նոր սերունդին լուսատրումին եւ արժեւորումին հետ, իր օրինակով ու ձեւատրումով զայն պահելու իր հոգատարութեան ու սրտածօտիկութեան տակ:

Իսկ երբ պատեհութիւնը ներկայացաւ ընդառաջելու այն պաշտօնական հրաւերին, ստանձնելու Ուրուկուէի ՀԲԸ Միութեան վարժարանի հայկական բաժնի տնօրէնութիւնը, Օհանը անմիջապէս մեկնեցաւ հոն ու շուրջ տասը տարի վարեց այդ պատասխանատու պաշտօնը:

Հոգեպարար ուրախութիւն մը ապրեցաւ Օհանը այդ տարիներուն, հաւատալով որ այդ առիթը, իրեն համար, ոչ միայն ուրախութիւն ու հպարտութիւն էր, այլ՝ աշակերտութեան հետ շաղուելու ու շփուելու միջոց մը, որ այնքան իր սրտին կը խօսէր, մանաւանդ երբ նոր սերունդին հետ, իր հայրական ու ծնողական մեթոդներով, զայն կը կամրջէր հայրենիքի հետ, հայրենասիրական, ազգասիրական ու հայաստանասիրական անաղարտ ոգիով լիացնելով բոլորը, հայկականութիւնը եւ հոգատարութիւնը նկատելով գերագոյն հրճուանք ու գոհունակութիւն, զանոնք ներարկելով աշակերտութեան ոգիին ու սրտին մէջ, որպէս թանկարժէք մասունքներ:

Այդ ժամանակամիջոցին, Օհանին համար, միայն կրթական աշխարհը չէր որ զինք կլանած եւ ոգեշնչած էր, այլ՝ նոյնքան ազգային կեանքը, ուր ան գործօն մասնակցութիւն կը բերէր ՌԱԿ-ի ու ՀԲԸՄ-ի, Ուրուկուէի միջմիութենական եռուն կեանքին մաս կազմելով, նաեւ աշխատակցելով, տեղույն «Սարդարապատ» պարբերաբերքին:

Յետ աւարտը իր տասնամեայ տնօրէնական պաշտօնավարութեան, Օհանը դարձեալ վերադարձաւ Պէյրութ եւ իր ազգային-միութենական վերանորոգ աշխատանքներուն մէջ, շարունակեց իր դերն ու մասնակցութիւնը ընծայել, մանաւանդ կրթական շրջագիծէն ներս, ՀԲԸ Միութեան վարժարաններուն մէջ (Յովակիմեան-Մանուկեան եւ Պօղոս Գ. Կարմիրեան), դասաւանդելով հայերէնագիտական նիւթեր, այն հաւատքով, որ ատոնք կը մնան նոր սերունդին ինքնութեան եւ էութեան արժանիքները, իսկ զանոնք ըմբռնելն ու ամրացնելը, հաստատուն կռուաններ կը դառնան հայ աշակերտութեան համար:

Այլապէս ալ, Օհանը երբեք չզլացաւ իր ունեցած գիտելիքներն ու փորձառութիւնները ի սպաս դնելու այն շարժումներէն ու ձեռնարկներէն ներս, ուր իր ներկայութիւնը օգտակար կրնար հանդիսանալ, իսկ ինք՝ պատրաստակամ, այդ ուղղութիւններով, իր նպատակը բաշխելու:

ՀԲԸՄ-ՀԵԸ «Նօսնակ» պաշտօնաբերքը եւ անոր մշակութային մարմինը, Օհանին վերջին տարիներուն եղան ոչ միայն իր ուշադրութեան կիզակէտերէն, այլեւ՝ բանի ու գործով, գորավիզ կանգնելու անոնց արդիւնաւէտ ու բարեբեր աշխատանքներուն:

Այդ առումով ալ, համեստ գոհունակութիւն մը կ'ապրէր, մանաւանդ երբ ականջալոր կ'ըլլար իր հասցէին կատարուած գովելի վերաբերմունքներուն եւ արժանի գնահատանքներուն:

\*\*\*

Օհանը, իր ընկերասիրութեամբ, հաճոյախօսութեամբ ու հաւատարմութեամբ, առանց տեղի տալու որեւէ արգելքի կամ դժուարութեան առջեւ, երբեք չէր ընկրկեր կամ խուսափէր որեւէ պարտաւորութենէ, որովհետեւ կ'ըսէր. «Ես Միքիան եւ Չարուի Պոտրումեաններուն դաստիարակած գաւակն եմ, գտարիւն հայ, անբասիր ազգային, հաւատարմ գաղափարապաշտ ու ջերմ հայրենասէր»:

Այո՛, իրաւունք ունէր, այնքան ատեն որ՝ այդպէս ապրեցաւ եւ գործեց, ծառայեց ու շնչեց:


Օհանին հետ մեր անցուցած եւ ապրած կեանքը, խօսուն էր, իմաստալից, հաղորդական եւ անջնջելի, որ տեսեց, շուրջ 62 տարի, ոչ միայն զուտ ընկերային մեթոդներով, այլեւ՝ միջընտանեկան ու միջբարեկամական կապերով, որոնց յիշատակագրութիւնը եւ յիշողագրութիւնը, ամբողջ պատմութիւն մըն է, իր կենդանի, պերճախօս, ջերմեռանդ, հարուստ եւ ոգեշունչ դրուագներով եւ անմիջական հարազատութեամբ:

\*\*\*

Տխուր ու ցաւալի էր Օհանին մեկնումը, յատկապէս՝ իր խնամատար կնոջ՝ Սիլվային եւ իր հոգեհատոր՝ Նայիրիին համար, որոնց հետ այնքան ուժգնօրէն ու սերտօրէն կապուած էր եւ կ'ապրէր անոնց սիրալիրութեամբ եւ ողջասիրութեամբ:

Յիշատակդ՝ անմոռանալի, սիրելի Օհան, լոյսերու մէջ ննջես, երկնային արքայութեան մէջ:

Պէյրութ



# ԿԵԱՆՔ - ԱՐԵՒ - ԳՈՅՈՅԹ\*

ԳՈՎՏ. ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Ամեն արարած իր արեւն ունի  
 Հետը կը ծնի, հետը կը մեռնի...  
 Կը մեռնի ըսի,  
 Ո՛չ, չի՛ մահանար  
 Պարզ կը խաւարի... լո՛ւտ կը մթագնի...

Արեւը կ'երթայ, լոյսն իր կը մարի  
 Բայց արարածը, կը մնայ՝ կ'ապրի՝  
 Իր՝ «Է»՛ն թխած «գոյոյթով»՝ վեհի...

Մարդը կը մեռնի,  
 Իսկ «Է»՛ն խոհերու ծիրերը գրկած  
 Լուռ կը սաւառնի  
 Նոր արեւներուն լոյս կը պարզելի...


Ամեն արարած իր արեւն ունի  
 Հետը կը ծնի, հետը կը մեռնի  
 Չէ՛... չի՛ մահանար...

Ան կ'ապրի, կ'ապրի շունչովը «Է»՛ի,  
 Հուրովն՝ որ տուալ բազինին կեանքի,  
 Լոյսովն որ տուալ ճամբուն յաւերժի,  
 «խոհոյթ»ովն\* «Է»՛-ի՝  
 որ տուալ անոնց,  
 որ եկան խոհարարի արեւամուտին  
 իր ճախրած կեանքին արեւն երգելու...


Մարդը կը մեռնի...  
 Բայց ՉԻ՛ մահանար...

Ո՛չ, ՉԻ՛ մահանար...  
 Ան լուռ, լռակեաց...  
 «Է»ոյթով\*... ԿԱՊՐԻ...

\*գոյոյթ, խոհոյթ, է-ոյթ, բառերը՝ «Նորակազմ Բառերու Համակարգ»էս են: Գրիգորեան Տոմար- Օր՝ 7, Ամիս՝ 4, Տարի՝ 2026  
 Հայկեան Տոմար՝ Օր՝ Գիշերավար, Ամիս՝ Արեգ, Յամի ՏՇԺԷ (4517)



**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ**



Ողբ. ՕՀԱՆ ՊՈՏՐՈՒՄԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 12 Ապրիլ 2026-ին, Նորաշէնի Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ մէջ, Պուրծ Համուտ:

Հոգեհանգստեան արարողութենէն ետք, ՌԱԿ "Պայքար" ակումբին մէջ տեղի պիտի ունենայ հոգեսուրծ, ոգեկոչելու Օհանին պայծառ յիշատակը:

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ**

ՎԵՐԺԻՆ ՉԵՐՉԵԱՆ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ (խմբագիր ՓԹԻԹԻ) մահուան Ա. տարեկիցին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի կիրակի, 19 ապրիլ 2026-ին, Նորաշէնի Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԾԱՆՕԹ.- Յետ հոգեհանգստեան արարողութեան, հոգեսուրծ պիտի մատուցուի եկեղեցւոյ "Եռագոյն" սրահին մէջ:



**ԱՏԱՑԱԼՔ**






Հովանաւորութեամբ՝  
**ԳԵՐՇ. Տ. ՅՈՎԱՆԱՆ ԱՐԷ. ՏԵՐՏԷՐԵԱՆԻ**  
 Առաջնորդ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Հիսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի

**Շնորհանդէս**  
 Գլխաւոր բանախօս՝ Ռուբէն Աւարեան  
 Խմբագրի խօսք՝ Հրաչ Սեփեթեան  
 Գեղարուեստական յայտագիր

**ԻՆՉ ԸՆԵԼ**  
 Որպէսզի Չկրկնուին Անցեալի Սխալները



7 Մայիս 2026-ին  
 Երեկոյեան  
 Ժամը 7:30-ին

**Յարուհ Տեր Դաւիթեան**  
 Armenian Society of Los Angeles  
 117 S Louise St, Glendale, CA 91205  
 Մուտքը Ազատ - Հանդիսութեան Աւարտին՝ Հիւրասիրութիւն